



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



二·九

891.71-
9-83

30 MAY 2011

Մ. ԳՕՐԿԻՅ

ԶԵԼԿՈՎԸ

ԵՒ

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՇԵ ՎԱՐԴԱՂՄ

(Արտասանված «Լուժալ» Երկամսեալ հանդիսից)

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Ռօմինեանց
1903

ՏԵՍ. ՅՈ
ՀԱՅ

891.471.7

Գ-83

Կ.

Մ. ԴՕՐԿԻՑ

Զ Ա Ր Ա Ջ Չ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԱՆԻ ՀԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԱՆԻ

536

Հ Ե Լ Կ Ա Ը Ը

ԵՒ

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՐԳԱ. ՄՈՒՇԵ ՎԱՐԴԱՂԱՑ



ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Ռուսինեանց
1903

24.03.2013

10772

ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԱՐԱԾՈՒՅԹ

10

ՎԵՐԱՎՈՐ ՊԱՍՏՈՒՄ ԱՌ

Дозволено цензурою, Тифлисъ, 3-го Июля 1902 г.

Յ Ե Ւ Ե Զ Ա Բ Ե Ն

Մակսիմ Գորկիւ—Հայերէն թարգմանութիւնների առթիւ:—Մ. Գորկիի
կեանքը և զրականական գործունէութիւնը—նրա զիասոր երկերը և
տաղանդի լատկութիւնները—նրա նշանակութիւնը:

Ա.

Այս անգամուայ յօդուածս կամիմ նուիրել երիտա-
սարդ ուսւ գրող Մակսիմ Գորկիին և կարծում եմ, որ
իրաւունք ունիմ այդ անելու, քանի որ նա ժամանա-
կակից ուսւ գրողների մէջ առաջին տեղերից մէկն է
քոնում և մինչև իսկ եւրոպացիները հետաքրքրւում
են նրանով: Մեր մամուլի մէջ էլ այդ գրողը բոլորովին
անծանօթ անձն չէ՝ նրա մասին երևացել են յօդուած-
ներ «Մշակում», «Նոր Դարում», «Տարագում», նրա գը-
րուածքներից թարգմանաբար լոյս են տեսել «Բազէի
երգը» Մշակում, «Սատանայի մասին» և «Մակար Չաղ-
քա»—նոր Դարում: Մասնաւորապէս «Լումար» ի ընթեր-
ցողներին հետաքրքրական կլինի ծանօթանալ Մակսիմ
Գորկիի հետ, որովհետև հետևեալ համարում լոյս է
տեսնելու նրա ամենալաջող պատկերներից մէկի, «Չէլ-
կաշի թարգմանութիւնը»:

Ես գիտեմ՝ շատերն ուսերը վեր կանեն և կասեն՝
«ինչ հարկ կայ հայ ընթերցողին ծանօթացնել ուսւ
սկսնակիների վէպիկների հետ, երբ նրանք գեռ չեն
կարգացել եւրոպական հանճարների գլուխ գործոցները
և կամ նոյն ուսւ, բայց երևելի, հեղինակների ամե-
նալաւ երկերը թարգմանեցէք նախ Բալրընի Չալլդ-
Հարոլտը կամ Վիկտոր Հիւգովի վէպերը և գրամաները,
Զօլտարի «Փողը», Լ. Տոլստօվի «Պատերազմ» և խաղաղու-

*). Անցեալ անգամ խոստացել էի ծանօթացնել «Լումար» ի ըն-
թերցողներին Մ Նալբանդեանի Պօլոս Պետրոսեան բանտից գրած նա-
մակների հետ Չեմ կատապում խոստում, որովհետև ինձ մտ զրո-
նուած այդ նամակների մասին մի յօդուած է պատրաստել պ. Եր. հա-
շաղիոյը և այդ յօդուածը լոյս է տեսնելու «Լումար» ի հետևեալ համա-
գում: Մ. Բ.

թիւնը և այլն... իրաւունք ունիք, կպատասխանեմ եսւ
Անշուշտ մեր մամուլի պարտականութիւնն է ծանօ-
թացնել հայ հասարակութեանը եւրոպական գեղա-
րուեստական գրականութեան ամենաընտիր արտադրու-
թիւնների հետ և այդ - թէպէտ և քիչ չափով - բայց
այնու ամենալիւ արուել է և արուում է: «Փորձը»
չէր, որ ծանօթացը հայերին Շիլէրի գրուածքների
հետ: Յանկալի կլիներ ի հարկէ, որ եւրոպական գրա-
կանութեան գլուխ գործոցների (շէքէվրների) թարգա-
նութիւնը միշտ առաջին տեղը բռնէր մեր պարբերա-
կան մամուլի, մասնաւորապէս ամսագրի մէջ: Բայց
այդ «շէքէվրների» համար անհրաժեշտ են և առաջնա-
կարգ թարգամանիչներ, իսկ ուր են նրանք: Մեր վաս-
տակաւոր թարգամանիչները, ինչպէս Գ. Բարխուդարեա-
նը, Փ. Վարդանեանը և այլք կարծես ձեռք են քաշել
այդ տեսակ աշխատանքից: Տաղանդաւոր թարգամանիչ
Յ. Խան Մասէհեանը մեր պարբերական մամուլի մէջ
չէ երկում: Համեմտաբար բաւականին շատ թարգամանու-
թիւններ են տալիս՝ Ս. Ծատուրեանը (ոտանաւորներ), Տ.
Յովհաննիսեանը, Մուշէ վ. Դանագէօզեանը, Գ. Քահ. Աղա-
նեանը և Ի. Յարութիւնեան. կան և ուրիշ թարգամանիչ-
ներ *) բայց դրանք շատ քիչ են թարգամանում և գլ-
րական ասպարիզի վերալ երեսում են իրեւ պատահա-
կան հիւրեր: Մեզ հարկաւոր են լաւ թարգամանիչներ,
գիտուն և տաղանդաւոր թարգամանիչներ: Եւ թէպէտև
Յովհաննէս Թումանեանը ասում է (Տարազի վերջին
համարներից մէկում), որ պարբերական մամուլը ոչ
ոյժ և ոչ էլ կոչում ունի տաղանդ ստեղծելու կամ
սպանելու, բայց ես այն կարծիքին եմ, որ մամուլի
խրախուը կամ հալածանքը, լուրջ քննադատութիւնը
կամ հայհուանքը, խրատը կամ «գեավազութիւնը» մեծ
դեր են խաղում ամեն մի գրողի կեանքի մէջ: Թէ ինք-
նուրոյն գրողներին և թէ թարգամանիչներին մամուլը
կարող է առաջ քաշել, խրախուսել, միջոց և ասպարէգ
տալ իր տաղանդը երևան հանելու, տալ նրան որոշ
ուղղութիւն, ցոյց տալ նրա թոյլ կողմերը. և կտմ կա-
րող է փակել գրողի առաջ խմբագրութեան դռները,

*) Հ. Առաքելեան, Ս. Կիսիցեան, Տ. Կոստանեան և այլն.

անիրաւացի կերպով ծաղբել նրան, յուսահատեցնել,
ստիպել նրան թողնել այդ ասպարէզը: Մանաւանդ այդ
հեշտ է անել թարգմանիչների հետ և այդպէս էլ շատ
անդամ անարդար և անխնայ վարուել են մեր հրապա-
րակախօսները մեր գրողների և թարգմանողների հետ:
Դրականների խմբի նորանալու պատճառը հէնց այն
է, որ մեր պարբերական մամուլի մէջ բացակայում է
քննադատութիւնը, իսկ նրա փոխարէն բուն է դրել
փոքրիկ հոգիների վրիժառութիւնը, տգէտների խելքի
զոռը, գեղարուեստական ճաշակից զուրկ մարդկանց
մէծամտութիւնը:

Եթէ մենք վաթսնական թուականներից ի վեր
ունենալինք իսկական գրական քննադատութիւն, որը
իրեն նպատակ գրած լինէր զարգացնել ընթերցողների
ճաշակը և բացատրել հին և նոր, մեր և օտար գրա-
կան երկերը — այն ժամանակ անշուշտ նախ մենք կու-
նենալինք շատ աւելի թարգամանական վէպեր, դրամա-
ներ, բանաստեղծութիւններ և առ հասարակ գեղա-
րուեստական գրուածքներ, քան թէ ունինք այժմ, և
երկրորդ՝ կրկնապատիկ զարգացած և ճոխացած կլինէր
մեր ինքնուրոյն գրականութիւնը: Այսպէս ուրեմն, ես
լիովին համաձայն եմ, որ մեր ընթերցողներին անհրա-
ժեշտ է ծանօթացնել Նէկսպիրի, Գէօթէի, Դիկէնսի,
Զոլայի, Մօպասանի, Տօլսուլի, Իբսէնի և այլ լաւա-
գոյն հեղինակների գլուխ գործոցների հետ: Այդ գը-
րուածքները կզարգացնեն մեր ընթերցողի գեղարուես-
տական ճաշակը, կլայնացնեն նրա մտաւոր հորիզոնը,
կրդաստիարակեն նրան մարդասիրական սկզբունքների
հիման վերայ: Բայց միեւնոյն ժամանակ տեսնում եմ,
որ այդպիսի գրուածքների թարգամանիչներ մենք շատ
քիչ ունենք, ուստի մեր պարբերական մամուլը ստի-
պուած է տալ և երկրորդական օտար հեղինակների
թարգամանութիւնները: Այդ տեսակի գրուածքների
թարգամանիչներ շատ կդտնուին և խմբագրին մնում է
ընտրել գրուածքներից լաւագոյնը, իսկ թարգամանու-
թիւններից ամենալաջողը:

Սակայն բացի համամարդկային նշանակութիւն ու-
նեցող երկերի հետ ծանօթացներու գործից — մամուլը

պարտական է առօրուն անել ընթերցողին և գրական թարմ և առաջնակարգ երեսովներին, որոնց հետնա կարող է ծանօթանալ կամ կարդալով նորագոյն գըրուածքների թարգմանութիւնները և կամ նրանց մասին լոյս տեսածք քննադատական և կենսագրական յօդուածները: Նորագոյն գրուածքների միջոցով մենք ծանօթանում ենք «այսօրուայ» մարդու բնաւորութեան, գաղափարների, դրութեան, նիստ ու կացի և իդեալների հետ: Նրանք պատկերացնում են մեր առաջ արդի կեանքը, և ոչ միայն մեզ շըջապատող այլ հեռաւոր երկրի, որին պատկանում է հեղինակը: Իբսէնի և Բեօրնսոնի գրուածքների մէջ արտափալում է գարուս վերջի Սկանդինավան, ինչպէս Զօլայի, Բուրժէի, Բոդլէրի, Վէրլէնի, Միրբօլի և այլոց գրուածքների մէջ ժամանակակից Փրանսիալի զանազան կողմերը. նոյնպէս և. Տօլստոյի, Կորուէնկովի, Չեխովի և Գորկիի վերջի վէպերը և վէպիկները կարդալիս դուք գգում էք ձեր առաջ ամբողջ ժամանակակից Ռուսիան, որի լաւագոյն ներկայացուցիչներն հէնց այդ հեղինակներն են: Ուսումնասիրեցէք «Յարութիւնը», «Սիբիրական պատկերները», Չեխովի անթիւ մեծ ու փոքր վէպիկները և պատմուածքները, և Մակսիմ Գորկիի գրուածքները և դուք բացի գեղարուեստական բաւականութիւն ստանալուց, բացի ձեր մտքին և զգացմունքին պիտանի ճաշակ տալուց — դուք ուսումնասիրած կլինէք որպէս ուշիմ ճսնապարհորդ կամ գիտնական և արդի Ռուսսիան, նրա կեանքը, նրա բարոյականը, մտաւոր և տընտեսական գրութիւնը. նրա ձգտումները, նրա թշնամիներին և բարեկամներին, նրա լոյսը և ապաւէնը: Ահա այս տեսակէտից ես կարծում եմ, որ անհրաժեշտ է ընթերցողին տալ թարգմանութիւններ և արդի, նորագոյն հեղինակների թարգմանութիւնները: Հարկաւոր է միայն տալ լաւագոյն գրուածքները, ամենաբնորոշ ները և մատչելիները: Մասնաւորապէս Գորկիի հետ ծանանի տաղանդաւոր, բոլորովին ինքնուրոյն, «ինքնածնունդ» հեղինակի հետ և մեզ բոլորիս համար նոր լրջանի, մարդկանց նոր գտակարգի հետ: Նրա գա-

ղափարները գուցէ նոր չեն, բայց արտայայտուած են շատ համարձակ, աղդու և կտրուկ կերպով: Ծանօթանանք այդ մարդու կեանքի, գրուածքների և գաղափարների հետ:

❖.

Վ. Ֆոցեանովսկին հետևեալ կենսագրական տեղեկութիւններն է տալիս Մ. Գորկիի մասին, որի իսկական ազգանունն է՝ Ալէկսէյ Մակսիմովիչ Պէշկով: Ծընուել է նա 1869 թ. մարտի 14 ին Նիժնըլի—Նովգորոդում: Նրա հայրը արհեստաւոր է եղել, իսկ մայրը արհեստաւորի աղջիկ: Մանկութեան օրերը նա տնց է կացրել նեղութեան գրկում և շատ շուտ որբացել է: Մի քիչ գրել կարգալ սովորելուց յետոյ նրան տեղաւորում են սրա նրա մօտ ծառայութեան, բայց, թէսկէտ և տասը տարեկան երեխայ, Պէշկովը չի կամենում տանել ծառայի լուծը և փախչում գնում է «աղայի» մօտից և այդ օրուանից սկսած ստիպուած է լինում իւր «գըլխի շարէն» ինքը տեսնելու: Սկսում է թափառաշըջիկի կեանքը, որի առաւելութիւնը նրա ազատութեան և անկախութեան մէջն է, իսկ անթիւ պակասութիւններից գլխաւորը՝ նիւթական անապահովութիւնը: Նրա մի շարք գրուածքներից մենք տեսնում ենք, թէ որ աստիճանի նեղութիւններ է քաշել ապագայ վիպատնը իր բազմամեալ թափառաշըջիկի կենցաղավարութեան ժամանակ: Իր հերոս Կօնովալովի նման նա ոտով անցել է Վոլգայից մինչև Սև ծովը, հիւսիսից մինչև Կովկաս. եղել է Ղուբանի վերայ և Թօնի ափերին, ապրել է Լեռնցիների և բոշաների հետ, գիշերները անքուն է անց կացրել և շան նման տանջուել է քաղցից, ամենածանը և կեղտոտ աշխատանքներ է արել և կոպէկանց վարձատրութիւններով օրեր ու ամիսներ անց կացրել: Նա քաջաբար անցել է կեանքի անխնայ բովից, երբէք չի ընկճուել բեռան ծանրութեան տակ և քայլառ կատարելագործուելով՝ մթին խաւարից լոյտաշիարէ է եկել: Հետևանքը՝ բազմաթիւ տաղանդաւոր գրուածքներ, նիմթական ապահովութիւն, հոչակ և... խանգարուած առողջութիւն, որը կազդուրելու համար

ապրում է նա ալժմ Ղրիմում, ուր նոյն նպատակով գտնվում են նաև Լև Տօլսովը և Ս. Զեխովը:

Երեք տաղանդ ի միասին, երեք ներկայացուցիչ մի ժողովրդի երեք զանազան խաւերի՝ մէկը սիրում է ազնուականներից, միւսը միջնակարդ քաղաքացիներից, երրորդը արհեստաւորից, բայց և միւնոյն ժամանակ ներկայացուցիչ է Հինգերորդ դասակարգի: Գուցէ հարցնեն ինձ ո՞րն է այդ դասակարգը: Յիշում էք ֆրանսիական մեծ յեղափոխութեան սկզբին երևան եկած բրոշիւրը «Ինչ է երրորդ դասակարգը». այդտեղ խօսում էր հոգեորականների ազնուականների և բուրժուաների—այսինքն երրորդ դասակարգի մասին. «Նրանց է պատկանում ապագան»—ասում էր բրոշիւրի հեղինակը: XIX-րդ դարը թէպէտե յաղթութիւն տուեց այդ դասակարգին, բայց և խկոյն խօսք բացեց չորրորդ դասակարգի մասին—այն է բանուորների մասին: Մինչ արևմտեան Եւրոպայում այդ դասակարգը կազմակերպուած ոյժերով մասնաւոր յաղթանակներ է տանում—Գորկին յանկարծ ցոյց տուեց մեզ մի այլ դասակարգի ներկայացուցիչների լուսանկարները և մենք տեսանք, որ սրանք այլ են քան թէ բանուորները: Դրանք այն անտուն-անտէր, թափառաշրջիկ «բոսեակներն» են, որոնց կարելի է տեսնել բոլոր քաղաքների փողոցներում, գինետներում, շուկաներում, նաւահանգիստներում: Դրանց շըրջանը ամեն ըովէ ստուարանում է այն մարդկանցով, որոնք ընդունակ չեն այլ ևս բանուորի կամ արհեստաւորի պէս օրն ի բուն աշխատել, որոնք հարբեցողութեան ճանկերից չեն կարող ազատուել, որոնք ոճագործութեան ձախորդ հանգամանքների և կամ այլ անբաղդութեան պատճառով ստիպուած են, որպէս զի սովամահ չլինեն—ամեն ինչ անել: Ամեն ինչ՝ այսինքն և ուրիշ հաշուով ապրել, գողութիւն անել, ի ստիպել հարկին—աշխատել, առանց ուշադրութիւն դարձնելու աշխատութեան որպիսութեան և վարձատրութեան վերալ և այլն:

Եթէ բանուորները աշխատանք տուողների ստրուկներն են, «բոսեակները» իրանց անկախութեան և ազատութեան ստրուկներն են:

Մ. Գորկին երկար տարիներ անցել է այդ շկողան և կենդանի կնքպով ու պատկերօրէն նկարագրել է մեզ նրան իր վէպիկների մէջ: Ո.Հա նրա թափառական կեանքի ուրուագիծը՝ կօշէկի խանութի մէջ ծառայելուց յետոյ նա անցնում է մի նկարչի մօտ: Դրա մօտից փախչում է և Վոլգալի մի շոգենաւի խոհարարի օգնական է գառնում: Յետոյ անցնում է հացմուխի մօտ, մի քիչ յետոյ օրավարձի համար գետափը ծանր աշխատանքներ է անում: Ղազանից անցնում է Յարիցին, յետոյ Նիժնա. բանում է երկաթագիծի վերայ, յետոյ մի քիչ ժամանակ կվաս կոչւեած խմիչքն է ծախում, յետոյ գրագրութեան պաշտօն է վարում, անգործ ըրջում է քաղաքից քաղաք, նահանգից նահանգ: Թէ ինչ է նա տեսել և զգացել այս զարմանալի «բազմակողմանի» գործունէութեան ժամանակ, նա պատմել է իր «Կոնսովալով», «Աղահանքերում», «Էմելեան Պիլեալ», «Աշնանը մի օր», «Իզերգիլ», «Մակար Չուդրա», «Ֆօմա Փորէկե», «Երեքը» և այլ պատկերներում:

Որտեղ է սովորել Գորկին և ինչպէս է եղել, որ նա գրական ասպարիզի վերայ է երևացել: Այդ հարցին պատասխան է տալիս ինքը Գորկին այսպէս՝ «Իմ առաջին ուսուցիչս եղել է խոհարար Սմուռը, երկրորդ ուսուցիչս՝ փաստաբան Լանին, երրորդ՝ Աղէսանդր Կալիւթնը»—«Հասարակութիւնից (շըրջանից) գուրս» մի մարդ, չորսորդ՝ Վ. Կորուէնկո (լայտնի հեղինակը):

Սմուռը—այն խոհարարն էր, որի օգնականն է եղել Գորկին Վոլգալի շոգենաւերից մէկի վերալ: Այդ խոհարարը մի ընթերցասէր մարդ է եղել և իր հետ մանածելիս է եղել մի արկղ, որի մէջ զանազան բովանդակութեամբ գրքեր են եղել՝ ուսւ և եւրոպական նշանաւոր հեղինակների, ժողովրդական գրքեր, լիմար-լիմար վէպեր, հին ամսագրների համարներ, «վարք սրբոց» ևն: Թէպէտ և Գորկին այդ խոհարարի հետ ծանօթանալուց առաջ էլ է կարդացել «անլայտ հեղինակների երևելի գրուածքներից», բայց Սմուռը—ըստ երեսութիւն՝ ամեն կերպ զարգացել է Գորկիի ընթերցասիրութիւնը և ծանօթացրել է Դիւմալի, Գոգովի, Ռևոլյուցիոնիստ և այլ հեղինակների հետ: Յամենայն դէպս Գորկին իր ընթերցա-

Նութիւնը սկսել է ռոմանտիկ և հեքեաթական գրուածքներից, որոնց ազդեցութիւնը մենք տեսնում ենք և իր, Գորկին, գրուածքների մէջ։ Որուղ և ինչ դրութեան մէջ էլ որ լինի—Գորկին գրքերի շնորհիւ իդէալների աշխարհումն է պատում և երևակայական կեանքով ապրելով՝ կարծես մոռանում է իր անշուք շըշապտում։ Ակնոնվարով՝ սիրուն վէսպիկի մէջ Մ. Գորկին պատմում է ինչպիսի լոփշտակութիւնով նա կարդացել է իր ընկերոջ հետ Ռէշէտնիկովի, Կոստոմարովի, Գոգոլի, Դոստոևսկու մի քանի գրուածքները։ Նա այն ժամանակ հացթուիի մօտ է ծառալելիս եղել և այդ ժամանակի ժամանակ օգտուելով ազատ ըովեներից — նա ինչպէս սիրահար գաղտուկ վերցնում է գիրքը և կարդում։ Գիրքը սովորեցրել է նրան լրջօրէն վերաբերուել կեանքի երևոյթներին, գիրքը նրան կարողացել է բռնել այն խորը անգունդից, որի ծալին նա կանգնած է եղել իր շըմոլիկ կեանքի տարիներին։ Ի բնէ խելացի, ընդունակ և սրամիտ Գորկին ընթերցանութեամբ կարողանում է որոշ չափով իր ուսման ծարաւը լագեցնել։ Յետոյ երբ ծանօթանում է նիժնի Նովգորոդում Լանին փաստաբանի հետ—Գորկին լանձին այդ փաստաբանի գտնում է իր առաջին ինտելիգենտ ուղեցոյցին, որոնց թիւը յետոյ տարեցտարի աւելանում է։ Նրան յաջողում է մտնել ինտելիգենտ երիտասարդների շըցանի մէջ, ինչպէս ամեն մի երիտասարդ նա յափշտակում է բանաստեղծութիւնով և փորձեր է անում ստանալորներ գրելու։ Յետոյ երբ բաղդը նրան տանում է Կովկաս—այդտեղ, Թիֆլիսի «Համազ» լրագրի 1892 թուականի համարներից մէկում նա զետեղում է իր անդրանիկ պատմուածքը՝ «Մակար Չուդրա»։ Մի քանի տարի անցնելուց յետոյ Ա. Կորուլէնին պատահմամբ ծանօթանում է Գորկին հետ և իր հովանաւորութեան տակ է վերցնում սկսնակին, որի գրուածքները այդ ժամանակները արգէն լուս են տեսած եղել մի քանի լրագրներում։ Վ. Կորուլէնկոյի ազդեցութեան ներքոյ Գորկին լիովին նուիրւում է գրականութեան, հետամուտ է լինում իր զարգացման, սկսում է շարունակ ստեղծել...

Գրական ասպարիզի վերայ բաղդը նրան իսկոյն ժպտում է՝ նրա առաջ բացւում են բոլոր խմբագրատների գոները, ամեն կողմից լսւում են գովասանքներ և խախոյսներ։ Քննադատութեան գլխաւոր ներկայացուցիչները առանց տատանուելու զետեղում են Գորկին նորագոյն գրողների առաջին կարգը։ Առանց սխալուելու կարելի է ասել, որ Գորկին մասին քննադատութիւններ են երևացել ուուսաց բոլոր թերթերի և ամսագրների մէջ։ Նրա մասին խօսել և նրա գրուածքները թարգմանել են ֆրանսիացիները, անգլիացիները, իտալացիները, գերմանացիները, լեհացիները, ամերիկացիները և հայերը։ Այդ քննադատութիւններից գըլիսաւորը ես ի նկատի ունիմ յօդուածս գրելիս։

¶.

Ոչ մի ռուս հեղինակի գրուածքները կարճ ժամանակուալ մէջ այնպիսի քանակութեամբ չի տարածուել—ինչպէս Գորկիի գրքերը։ Մինչև այժմ նա հրատարակել է վէպերի և վէպիկների հինգ հատոր, որոնցից առաջինը 32 հազար է ցրուել, երկրորդը 28 հազար, երրորդը 26 հազար... վերջապէս մի ամիս առաջ լուս տեսած «Մէպահե» դրաման տրգէն 25 հազար օրինակ է տարածուել։ Այդպիսի չտեսնուած յաջողութիւնը բացատրում է զանտզան պատճառներով։ Անշուշտ այդ պատճառների մէջ առաջին տեղն է բռնում հեղինակի անուրանալի տաղանդը, բայց չըպէտք է անտես տռնուեն և ա) հեղինակի տենդէնցիան, որ գուր է գալիս արդի ռուս ընթերցող հասարակութեան, բ) Գորկիի տիպերը, որոնք մեծաւ մասմբ նորութիւն են գրականութեան մէջ, գ) վերջապէս յաջողութեան պատճառների մէջ վերջին տեղը չի բռնում այն հանգամանքը, որ Գորկիի երեան գալուժամանակամիջոցին գրական ասպարիզի վերայ աչքի ընկնող գրողներից մնացել էին Տօլստոյը և Զէխովը, երկու արգէն ամենքին լաւ ծանօթ, զրական գէմքեր։ Գորկին նոր տաղանդ էր և իրեն այդպիսին յաջող ըոպէին երևաց։ Եթէ օրինակ այս ըոպէիս մի որևէ տաղանդաւոր գրիչ երևայ մեր մամուլի մէջ, լինի նույնութիւնը պահպան կատարուած է։

Հրապարակախօս թէ վիպասան—հաւատացէք, որ ալդպիսի մեծ ժողովրդականութիւն կարող է ձեռք բերել մեր հայ հասարակութեան մէջ, որովհետև մեր գրականութիւնը այս ըովէիս բառիս բուն նշանակութեամբ գուրկ է նոր տաղանդներից։ Նոյն ալդ տեսակ հանգամանքով պէտք է բացատրել, իմ կարծիքով, և Գլիգոր Սրծրունու աջողութիւնը՝ նա ասպարէզ եկաւ իսկ ժամանակին երբ մի կողմից հասարակութեան մէջ պահանջ կար մի օրինաւոր թերթի և միւս կողմից գըրական ասպարիզի վերայ տիրում էր ամայութիւն։ Կամիմ ասել, որ շատ անգամ հեղինակի ժողովրդականութեան և յաջողութեան պատճառները հարկաւոր է որոնել կողմնակի պայմանների և պարագանների մէջ։

Մ. Դորկին գլխաւորապէս նորավէպ գրող է (նովէլլիստ), ալսինքն փոքրիկ պատկերների և պատմուածքների հեղինակ, թէպէտ և ունի մի երկու վէպիկ, երեք մեծ վէպ՝ «Գլուզացիներ», «Թուա Գործեւե», «Երեքը»—և մի գրամա, վերսիշեալ «Մէշչանէ»։ Ալդ բոլոր գրուածքները մի ամբողջութիւն են կազմում և հետաքրքրական տիպերի, ընաւորութիւնների, գէպքերի ու պատկերների ժողովածու են ներկայացնում։ Ովքեր են Մ. Դորկին հերոսները, նրա տիպերը։ Շատ են նրանք թուով, բայց ոչ բազմազան։ Մեծամասնութիւնը կապած է միմեանց հետ ներքին սերտ կապերով և բազմաթիւ նոյնօրինակ արտաքին յատկութիւններով։ Յիշենք մի քանիսները՝ Եմելեան «Պիլեալ—մի «բոսեակ», որը պատրաստ է մի կտոր հայի համար մարդասպանութիւն անել։ Չելիկաշ—կտրիճ բոսեակ, մաքսատնից գողութիւն անող, ազատասէր և արբեցող։ Նատաշա—անբաղդ արարած։ Սէօմկա և Միշկա—բոսեակներ, որոնք գողութիւն են անում խմելու նպատակով։ Տէրէզա—«ընկած» կանանցից մէկը։ Կոնով ոլով—շատ համակը մի բոսեակ, որը, երբ չի խմում, աշխատանքը և ընդունակ բանում է։ Օրլով—արհեստաւոր։ Խմում է, յետոյ բոսեակ դառնում։ Կուվալտա և ընկերները—«Երբեմն մարդիկ», ընկած, կորած արտրածներ։ Զաղուբրինա—բանտի բնակիչներից մէկը և այլն և այլն։ Դորկին հերոսների և հերոսուհիների այս փոքրիկ շար-

քից ընթերցողը արդէն տեսնում է, որ հեղինակը մեր առաջ բաց է անում բոլորովին նոր աշխարհ։ Տեղ տեղ կրկնելով հեղինակը մեզ ծանօթացնում է «Երբեմն» մարդկանց նիստ ու կացի, բնաւորութեան և գաղափարների հետ։ Ի՞նչ են նրանք ներկայացնում և ինչպէս է վերաբերում նրանց ինքը հեղինակը։

Ալդ անբաղդ (մեր կարծիքով) մարդկանց շարքը ամեն օր ստուարանում է գիւղացիներով, որոնք թողել են արտ ու հող, գիւղ և ընտանիք և շրջմոլիկի գաւազան են վերցրել՝ թափառելով քաղաքից քաղաք։ քաղաքացի արհեստաւորներով և բանուորներով։ Ժամանակ առ ժամանակ վաճառականների դաւակներով և ինտելիգենտներով։ Զխմողը դրանց մէջ բացառութիւն է կազմում։

Մ. Գորկիի պատկերների մէջ դրանք բոլորն էլ ընդունակ, համարձակ և ուժեղ բնաւորութեան տէրմարդիկ են։ Շատ անգամ նրանք այնպիսի ազնուութեամբ են վարում, այն աստիճան վեհանձն և բարեհոգի են դուրս բերուած, որ ընթերցողը իրաւուսք ունի ասելու, որ հեղինակը չափազանցութեան մէջ է ընկնում։ Եւ միշտ որ մի քանի պատկերների մէջ բոսեակը իդէալականացրած է այնքան, որ կորչում է գեղարուեստական չափը և շինծու պատմուածքի ու տէնդէնցիօզ նկարագրութեան կերպարանք է ստանում պատկերը։ Բայց ընդհանրապէս Գորկիի տիպերը վերին աստիճանի կենդանի են, որովհետև ուղղակի կեանքից են վերցրած, իրական անձնաւորութիւններ են և պատմուածքները որոշ անձնաւորութիւնների կեանքի դէպքեր են, կենսագրութիւնների հատուածներ։ Բացի բոսեակներից Մ. Գորկին դուրս է բերում բանտարկեալներին, անառակ կանանց, բոշաներին, բանուորներին, արհեստաւորներին, վաճառականներին և ինտելիգենտներին։ Ամենից թուլ են վերջի երկու դաստակարգերի ներկայացուցիչները, երևի այն պատճառով, որ աւելի քիչ է ծանօթ հեղինակին։ ընդհակառակը բոլոր մնացեալները—այնպէս միշտ են նկարագրուած, թէ արտաքուստ և թէ իրենց ներքին բնորոշ յատկութիւններով, որ կարող են մրցել ուսւ առաջնակարգ

գրական տիպերի և անձնաւորութիւնների հետ:

Բայց որ դասակարգից էլ վերցնի իր հերոսին Գորկին, նա անպատճառ կընտրէ իր սրտին մօտ ուժեղ անձնաւորութիւն լանդուգն, անհանգիստ, միշտ դէպի առաջ ձգտող, պայմանական կեանքից փախչող, մեծ գործի փափագող, (օրինակ Օրլովը) անբացարելի թախծից տանջուղ, (օրինակ Կոնովալովը) մտածող և խորհող, (Պիլեալ):

Դ.

Մ. Գորկին ալնքան բան է գրել, որ կարծես, գծուար լինելու չէր նրա գրուածքներից եզրակացութիւն անել նրա աշխարհահայեցողութեան մասին: Սակայն այդ այլպէս չէ, որովհետև Գորկին իր կարծիքը շատ քիչ և անորոշ է յայտնում, իսկ յայտնած գաղափարները տեղ տեղ ուղղակի հակասում են միմեանց: Թէպէտ և բաւականին պարզ է, թէ հեղինակը իւր հերոսներից որոնց է համակրում, բայց պարզ չէ թէ նըրանց որ յատկութիւնների համար է, ինչու է համակրում և կամ ինքը հեղինակը ինչպէս է հասկանում կեանքը:

Մի կողմից Մ. Գորկին փառաբանում է անհատական ազատութիւնը, միւս կողմից անձնութիւնութեան քառող է կարդում. անշուշտ այդ երկու գաղափարները հակասում են միմեանց: Ուժեղ անձնաւորութիւններ նկարգրելով, միշտ նրանց անսանձ եսասէր հակում. ները գեղեցիկ գոյներով նկարագրելով նա այնպէս է հասկացնում, իւր թէ ինքը նիցչէի կարծիքին է, թէ ապագան ուժեղինն է, որ բարութիւնը, եղբայրսիրութիւնը, քրիստոնէութիւնը – ստրկութեան նշան է: Միւնուն ժամանակ նա տալիս է Դանիկոլի պատմութիւնը, (Պառաւ Իգերգիլի մէջ) որը քրիստոնէական վեհ սիրու ալլաբանական պատկերն է: Ինչպէս հաշտեցնենք այդ երկու ծալրահեղութիւնները: Մ. Գորկիի գրուածքները, մեր կարծիքով, բողոք են արդի, ալսպէս անուանուած «եւրոպական կուլտուրալի» դէմ, բողոք սօցիալական յարաբերութիւնների, արդի կացութեան և գաղափարների դէմ: Հեղինակի հերոսները մարդկու-

թեան շրջանից դուրս են ընկած և տանջւում են մեր, հասարակութեան անտարբերութեան պատճառով: Մենք ենք, որ ստեղծել ենք այժմեան նիստ ու կացը, և ապագան: Արդարութիւնը մարդկային զոհ չի ընդունում, մինչդեռ Գորկիի գուրս բերած անձնաւորութիւնները այդպիսի զոհեր են: Ձեր կուլտուրան, առում է Գորկին իր գրուածքներով, սխալ ճանապարհով է գնացել և անարդար ներկալ է ստեղծել: Ապագան իրան Գորկին էլ պարզ չէ թէ ինչպէս է լինելու, միայն նա գիտէ, որ ապագան մարդուս իրաւունք պիտի տալ ապրելու մարդավայել կերպով, բնութեան համաձայն: Նա հաւատում է այդ ապագային և նրա գալստեանը...: Նայեցէք ձեր չորս կողմը, կարգացէք Զեխովի գրուածքները և դուք կտեսնէք, որ միջին դասակարգը գուրկ է որևէ ձգտումից, որևէ եղէալից: Քուրժուան ապրում է գոհ իր գրութիւնից, ինտելիգենտի վերայ կտրելի չէ լոյս դնել, դրանք չեն, որ պիտի կարողանան լաւագոյն կեանքի ձգտելով՝ խօսքից գործի անցել: Եւ Գորկին դտնում է այդպիսիներին՝ դրանք նրա հերոսներն են:

Մեր տաղմոկալի կեանքը – ճնշող տպաւորութիւն
է թողնում երիտասարդ վիպասանի վերայ. նա բացի ձանձրովից ուրիշ բան չի տեսնում մեզ պէս ապրողների կեանքի մէջ և եմէ լոյսը մեր վրայ գնելու լինի նա երբէք չի հասնիլ իր ցանկացուծ նպատակին: Հասարակ ժողովրդից դուրս եկածն էլ լիովին չի համապատասխանում նրա եղէալին. ժամանակակից մարդկանց, ասում է նա, պէտք է սթափեցնել քնից: Եւ ահա թէ ինչու Գորկին միւնոյն ժամանակ և ըէալական գրող է ուօմանտիկ է, նա մեծ տաղանդով միացնում է գրելու այդ երկու շկոլան և բարեխառներով տալիս է մեզ պատմութիւններ, որոնց մէջ իրականութիւնը և երեակայտութիւնը կապուած են անքակտելի կերպով: Իր նկարագրութիւնների մէջ՝ բնութեան, գործողութեան տեղի, ըրջապատող իրերի, խօսակցութիւնների մինչև իսկ փաստերի մէջ՝ նա ըէալիստ է.] բայց հերոսների բնաւորութիւնները նկարագրելիս, նրանց գաղափարների և փիլիսոփայութիւնների մասին խօսելիս

Գորկին շատ անգամ տալիս է ոչ թէ այն, ինչ որ
կալ և է, այլ այն, ինչ որ ցանկանում է որ լինի: Ներ-
կան քննադատելով՝ նա միենոյն ժամանակ տալիս է և
իր իդեալը, թէպէտ և ինչպէս արդէն տսել էի, քո-
ղարկուած կերպով: Բաւականին պարզ կերպով այդ ի-
դէալը դուրս է բերուած, ինչպէս նկատել է իր վերջի
յօդուածում և քննադատ Լ. Օբոլէնսկին, «Իզէրգիլ»
պատկերի մէջ: Այստեղ իզէրգիլը պատմում է մի երի-
տասարդ մարդու, Դանկօլի, մասին, որը իր ժողովրդի
կրած տառապանքները տեսնելով և կամենալով հանել
նրանց «անտառի խորքերից» համոզում է ժողովրդին
հետևել իրան, և նրանց գլուխ անցած առաջ է գը-
նում: Բայց անտառը մեծ է, ճանապարհ չկայ. շատե-
րը վհատում են, միւսները գանգատում: Դանկօն ան-
դադար առաջ է գնում և նրանց ճանապարհը լուսա-
լորելու համար պատառում է իր կուրծքը և բոցա-
փառ սիրտը իր ափի մէջ գլխից վեր բարձրացնելով—
առաջ է գնում և հանում է ապշած մարդկանց ան-
տարից լոյս աշխարհ... Որպիսի՞ սէր, որպիսի ոգես-
թութիւն, կամքի ոյժ և տոկունութիւն: Ընթերցողը,
որը մինչև այդ ժամանակ բարձրից էր նայում մարդ-
կութեան նշոյլն անգամ կարծես կորցրած բուեակների
ու արբեցող շրջմոլիկների վերայ—փոխում է իր կար-
ծիքը և սովորում է գնահատել նրանց մէջ «մարդուն»,
նրանց «ես»-ը, սիրել նրանց, ցաւել նրանց համար և
ջանք գործ դնել նրանց գրութիւնը բարւոքելու, ոչըն-
չացնելու այն պայմանները, որոնց շնորհիւ այդ մար-
դիկը շրջանից դուրս են ընկել: Այս կողմից Մ. Գորկին
շնորհակալութեան է արժանի իրեւ հումանիստ—գրող,
իրեւ հեղինակ, որ զարթեցնում է իր ընթեցողնե-
րի սրտերում ամենալաւ, ալտրուիստական զգացմունք-
ները:

Սա մի հեղինակ է, որը զգալ և մտածել է տա-
լիս, որը բաց է անում մեր առաջ կեանքի նոր խա-
ւեր, ոգեստում է նոր իդէալներով, և մղում է մեզ
դէպի լուսատու ապագան:

Մ. Բ.



Զ Ե Լ Կ Ա Ծ

(Մակարիմ Գյորգի)

1001
539

Նաւահանգստում բարձրացող թողից մթագնած
հարաւալին կապոյտ երկինքը պղտոր է. տօթ արեւը,
կարծես մախրագոյն բարակ շլարշի միջից, աղօտ նայում
է ծովին: Նա չի կարող անդրագառնալ ջրի մէջ, որով-
հետեւ ջուրը շարունակ բեկեկուում է թիերի հարուա-
ծից, զոգենաւերի անիւների բաղխումից, կտրատւում է
թրքական ֆելիւգների և ուրիշ առագաստանաւերի
ցուռներով, որոնք ամեն կողմից ակօսում են նեղուածք
նաւահանգիստը, ուր հատաքարերի միջև կաշկանդուած
ծովի ազատ ալիքները, իրենց վրայ սահող ահագին
ծանրութիւններից ճնշուած, բաղխում են նաւերի կո-
ղերը, ափերը, բաղխում են ու, հարուածներից փրփը-
րած, զանազան անպէտք իրերով կեղտոտուած, քրթ-
մընջում:

Խարիսխների շղթաների շառաչը, ապրանք բերող
վագոններն իրար միացնելու ըրխկոցը, չգիտես որտեղ
փողոցի սալաքարելի վրայ ընկնող երկաթի թիթեղների
մետաղական կոծը, փայտի խուլ բաղխոցը, ապրանքա-
կիր կառքերի շաչիւնը, զոգենաւերի մերթ ականջ ծա-
կող սուր, մերթ խուլ մռունչը, բեռնաբարձ մշակների,
նաւաստիների ու մաքսատան զինուրների կանչերը—
այս բոլոր ձախները միախառնուել, աշխատաւոր օրուայ
խլացուցիչ նուազն են կազմել և, աղմկայուզ ծուփով;
փռուել մնացել նաւահանգստի վերեւը, երկնքում, կար-

Ֆես վախենալով սլանալ վերև ու այնտեղ ցնդուել։ Իսկ ներքեից գէսլի նրանց վերանում են նորանոր ալիքներ — մերթ խուլ, որոտընդոստ, որ դղրդում են բոլոր շըրջակալքը, մերթ սուր, շառաչելով, որ բզկտում են փոշոտ, տօթակէզ օդը։

Հատաքարը, երկաթը, փայտը, նաւահանգստի քարուածքը, նաւերն ու մարդիկ — ամեն բան Մելկուրիին նուիրած բուռն-կրքոտ օրհներգի գորեղ հնչիւններ է արձակում։ Բայց ալդ օրհներգի մէջ մարդկանց հազիւ լսելի ձայները շատ թոլլ են ու ծիծաղելի։ Նոյն իսկ մարդիկ իրենք էլ, որ նախապէս ծնել են ալդ աղմուկը, նոյնպէս ծիծաղելի են ու խղճուկ, — նրանց թողոտ, պատառուառն, ճարպիկ, ուսերին բարձած բեռան տակ կզացած մարմինները, գէս ու գէն են վազվզում փոշու ամպերի, տօթի ու ձայների ծովի մէջ, և որքան չնչին են նրանք համեմատած շրջապատող երկաթեալ հսկաների, տպրանքի կոլտերի, շառաչող վագօնների և ամեն բանի հետ, որ իրենք են ստեղծել։ Իրենց ձեռքի գործը ստրկացրել, գիմազուրկ է արել նրանց։

Ծանր հսկալ-շոգենաւերը, գոլորշի արձուկելով, մէկ սուլում էին, մէկ ֆշացնում, մէկ էլ մի տեսակ հեծում, և նրանց արձակած ամեն մի ձայնի մէջ հեգնական արհամարհանքի ծաղը էր զգացւում գէպի սոսկական, փոշու մարդուկները, որ սողոսկում էին նրանց սոախտակամածների վրայ և խորունկ նաւակուերը լքնում իրենց ստրկական աշխատանքի արդիւնքներով։ Արտասուելու չափ ծիծաղելի էին մշակների երկար շարքերը, որոնք հազարաւոր պուդ հացահատիկներ իրենց ուսերի վրալ տանում, նաւերի երկաթէ ստամոքսներն էին լցնում, որպէս զի նոյն հացահատիկից մի քանի փունտ բան աշխատեն իրենց ստամոքսի համար։ Մի կողմէց գլւտած, քրտնքումը կորած, խոնչութիւնից, աղմուկից ու տօթից բժացած մարդիկ, և միւս կողմից

հզօր, արեկի առաջ փայլփլուն անձնեալ, անվրդով մեքենաներ, որոնք մարդկանց ձեռքով են ստեղծուած, — մեքենաներ, որոնք վերջի վերջով բան են գցւում ոչ թէ գոլորշիով, այլ իրենց արարիչների մկաններով ու արիւնով... գաժան և սառն հեգնութեան մի ամբողջ վէպ է այս համեմատութիւնը։

Ազմուկը — ճնշում է մարդուս, փոշին ոռւնգելը գրգռելով աչք կուրացնում, տօթը — ալրում է մարմինն ու թուլացնում, և շրջապատի ամեն ինչ — թւում էր լարուած, հասուն, համբերութիւնը հատուծ, պատրաստ տրաքուելու, մի ահեղ փոթորիկ բարձրացնելու, որից յետոյ կարծես թարմացած օդի մէջ հեշտ պիտի լինէր ազատ ու թեթև շունչ առնել, երկրի վրայ հանգիստ պիտի իջնէր, իսկ այն փոշով աղմուկը, խլացուցիչ, գրգռող, թախծալի կտապատութեան հասցնող աղմուկը պիտի անհետանար և քաղաքում, ծովի վրայ, երկնքում խաղաղութիւն և պայծառ, փառաւոր պիտի լինի...։ Բայց ալդ միայն թւում էր։ Ալդպէս է թւում նրա համար, որ մարդս գեռ լաւագոյն վիճակ ունենալուց յոյսը չէ կտրել և գեռ իրեն ազատ զգալու ցանկութիւնը մեռած չէ նրա մէջը...։

Կոուեց զանգակի տասն երկու համաչափ և հնչական ձայնը։ Երբ որ վերջին ողնձի հնչիւնը մարեցաւ, արդէն աշխատանքի վալրենի երաժշտութիւնը համարեա թէ կիսով չափ մեղմացել էր։ Մի ըոպէ յետոյ դադգոհութեան խուլ քրթմնջիւն էր գարձել։ Ալժմ արդէն մարդկանց ձայնն ու ծովի ճղփիւնը աւելի էին լսելի գարձել։ Սա-ճաշի ժամն էր։

I

Երբ որ բեռնակիր մշակները, աշխատանքը թողած, աղմկակի խմբեր կազմելով ցըռեցան նաւահանգստի չորս բոլորքը ու մանրափաճառ կանանցից զանազան

ուտելեղէններ գնելով հէնց այդտեղ, քարուածքի վրայ, ստուերոտ տեղերում էլ տեղաւորուած սկսան իրենց ճաշն անել, նրանց մէջ երեւաց Գրիշկա Զէլկաշը, մի հին եփուած գալ, որ նաւահանգստի աշխատաւորներին յայտնի էր իբրև կորած-հարբան և ճարպիկ ու խիզախ գող: Նա բորիկ էր, պլիսէ մաշուած վարդիկիկով, գլուխը բաց, հագին օձիքը պատռած, չթէ կեղտոտ շապիք, որի տակից երեւում էին նրա շարժուն, չոր ու սուր-սուր ոսկըները, մէջքին դարչնագոյն գոտի կապած: Նրա գգգորա ած ալեխառն սև մազերից ու տրութուած, սուր, զիշատիչ գէմքից երեւում էր, որ նոր էր քնից վեր կացել: Նրա խարտեաշ բեխերից մէկի մէջ յարդի կտոր էր մնացել, միւս յարդի կտորը խառնուել էր ձախ երեսի անածիլ մնացած կոշտ մազերի մէջ, իսկ ականջի ետեւը խրել էր մի փոքրիկ, նոր պոկած լորուճիւղ: Երկարահասակ էր նա, չոր չոր, փոքր ինչ կզացած, դանդաղաբար ման էր գալիս քարերի վրայ և իւր կեռ, գիշատչի քիթը դէս ու դէն շուռ տալիս, սուր հայեացք ձգում չորս կողմը. փալլում էին նրա մոխրագոյն սառն աչքերը և բանուորների մէջ մէկին փընտրում: Նրա թաւ ու խարտեաշ բեխերը, կատուի բեխերի նման, շարունակ ցնցուում էին, իսկ քամակին դրած ձեռներն իրար էին շփում ու երկալն, ծուռ ու կալչուն մատները ջղալնօրէն իրար հիւսուում: Մինչեւ անգամ այստեղ, իրեն նման գջլած ու խիստ նկատելի հարիւրաւոր շըջմոլիկների սինլընորների միջն նա իսկոյն աչքի էր ընկնում վալրի բազէի նմանութեամբ, որը երեւում էր նրա գիշատչի լրաբութեան ու դիտող քայլուածքի մէջ—նա մոխ էր գալիս արտաքուստ սահուն ու հանդարտ, բաց իներքուստ գրգռուած էր ու սրատես, նման այն գիշատիչ թռչնի թռիչքին, որին նա լիշեցնում էր:

Երբ որ հասաւ մի խումբ շըջմոլիկ բանուորների

խմբի, որ նստած էին ածխով լեցուն քթոցների կոյտի ստուերին, այդ խմբից նրան ընդառաջ վեր կացաւ մի թիկնաւէտ, ապուշ ու կապտկած բծաւոր դէմքով և ճանկուտած վզով մարդ, որ ըստ երևոյթին նորերս մի լաւ ծեծ էր կերած: Նա վեր կացաւ տեղից ու նրա հետ կողքովը գնալով ցած ձայնով ասաց.

Կամաւորի նաւաստիները երկու հակ շորեղէն են տակով արել...: Փնտրում են: Լսում ես, Գրիշկա:

— Հա, — հարցրեց Զէլկաշը, հանդարտ կերպով աչքովը նրան չափելով:

— Ինչպէս թէ—հա: Ասում եմ վնտրում են: Ուրիշ ոչինչ:

— Զինի ինձ էին հարցնում, որ օգնեմ: Եւ Զէլկաշը սուր ժպիտով նայեց այն կողմը, ուր կամաւոր նաւատորմղի պահեստներն էին շինած:

— Դէ կորիք, գնա:

Ընկերը լետ դարձաւ:

— Հէյ, սպասի: Եդ ով է երեսդ էղպէս նիշել. փիս են ներկել հա...: Եստեղ երքում Միշկալին հօ չես տեսել:

— Եատ ժամանակ է տեսած չեմ,—կանչեց սահւը ընկերների մօտը գնալով:

Զէլկաշը տուած գնաց, և ամենքն էլ, իբրև լաւ ծանօթի, դիմաւորում էին նրան: Բայց նա, որ միշտ զուարթ էր լինում ու կծու խօսող, այսօր, ինչպէս երեւում է, սիրտ չունէր ու հարցմունքներին կարճ ու կտրուկ պատասխան էր տալիս:

Որտեղից որ էր ապրանքի հակերի ետևից նրա առաջն ելաւ մաքսատան պահապանը՝ մուգ կանաչ գոյնի, փոշոտ ուղիղ ձգուած, կոռի սպատրաստ: Նա Զէլկաշի ճամբար: Կտրեց ու սպառնական դիրք բռնեց—ձախ ձեռը ձգեց դաշոյնի կոթին, իսկ աջը մեկնեց, որ Զէլկաշի օձիքից բռնի:

— Կանգնիր: Ո՞ւր ես գնում:

Զելկաշը մի քայլ յետ քաշուեցաւ, աչքը պահապանի վրայ ձգեց ու չոր-չոր ժպտաց:

Պահապանի կարմիր, բարեսիրտ-խորամանկ դէմքն աշխատում էր դաժան արտայատութիւն ստանալ, ուստի և փքուեց, գլորացաւ, կրակի գոյն առաւ, յոնքերը կիտեց, աչքերը չուեց ու շատ ծիծաղելի դարձաւ:

— Քեզ արդէն ասուած է - չհամարձակուիս նաւահանգիստ մտնել, ոսկրներդ կջարդեմ: Խոկ դու էլի, — սպառնագին կանչում էր պահապանը:

— Բարով, Սեմենը, շատոնց է տեսնուած չէինք, — հանդարտ կերպով ողջունեց Զելկաշն ու ձեռքը երկարացրեց:

— Ակի էլ չտեսնէի երեսդ: Գնա, գնա...:

Բայց էլի Սեմենը նրա ձեռքը սեղմեց:

— Ինձ մի այս ասա, շարունակեց Զելկաշն առանց իւր կպչուն մատների միջից բաց թողնելու Սեմենը ձեռքը և ընկերական-բարեկամաբար թոթուելով, — Միշկալին չես տեսել:

— Ե, ինչ Միշկա է էդ: Ոչ մի Միշկա չեմ ճանաչում: Գնա, հեռացիր, ախպեր, թէ չէ սլահեստի կտուավարիչը կտեսնի, նո հո...

— Եկ Միշկան, էլի, էն որ անցեալ անգամ հետո կոստրոմալի՛ վրայ աշխատում էր, — շարունակեց Զելկաշը:

— Որի հետ գողութիւն էք անում, այսպէս ասա: Քու Միշկալիդ հիւանդանոց տարան, ոտքը թուշի տակ էր մնացել: Դէ, ախպէր չան, քեզ խօսք են ասում, գնա էստեղից գնա, թէ չէ վզակոթիդ տալով դուրս կանեմ...

— Վա, դու բանը տես. բաս ասում ես — Միշկալին չեմ ճանաչում...: Ուրեմն ճանաչում ես եղել: Ինչի՞ ես ախպէս չարացած, Սեմենը...:

— Գիտես ինչ կայ, Գրիշկա, դու իմ առաջս կորեկ մի ցանիլ, վեր կաց, հեռացիր...:

Պահապանը սկսաւ նեղանալ և, չորս կողմը նայելով, աշխատում էր իւր ձեռքը Զելկաշի պինդ ձեռքից ազատել: Զելկաշը իւր թաւ յոնքերի տակից հանդարտ կերպով նայում էր նրան, քթի տակ ծիծաղում և, առանց նրա ձեռքը բաց թողնելու, շարունակում էր գրոյց անել.

— Դու ինձ մի շտապեցնի: Մի լու խօսեմ, կշտանամ - կգնամ: Դէ, ասա, ո՞նց ես... կինդ, երեխերքդ — առողջ են: — Եւ աչքերը նենգաբար փայլեցին ու, ծաղը բարար ժպտալիս ատամները բաց անելով աւելացրեց, — ուզում եմ քեզ զոնաղ գամ - բայց սկի մի ժամանակ չի լինում, — ո՞ր ասես խումից աչք բանալու ժամանակ չունիմ...:

— Դէ... դէ... դու այդ բաները թող...: Դու... հանաք մի անի, ծոտիկ սատանայ: Տես, ախպեր, հոմիտք չունիս տներում էլ, քուչեքում էլ թալան անելու:

— Ինչի՞ս է: Ալստեղի եղածն էլ ինձ ու քեզ հերիք է: Հաւատա, հերիք է, Սեմենը: Ա՛յ տղով, Էլի ես երկու հակ ապրանք պարտըկել...: Տես, Սեմենը, զգովշ կոյց, չբռնուես...:

Սեմենը, Զելկաշի աներեսութիւնից վրդովուած, սաղ մարմնով դողդողաց ու թուքերը շաղ տալով աշխատեց մի բան ասել: Զելկաշը բաց թողեց նրա ձեռքն ու երկայն քայլեր փոխելով յետ գնաց դէսի նաւահանգստի դարպանը: Պահապանը, անզուսալ հոլիհոլանք. ներ թափելով, գնում էր նրա ետեից:

Զելկաշը զուարթացաւ, նա ատամների արտնքով կամաց շվշացնում էր և, ձեռները վարտքի գրանը դրած, աջ ու ձախ սուր ծաղը շաղ տալով, ազատ մարդու գանգաղ քայլուածքով առաջ գնում: Յետեից նրան էլ միւնոյն ձեռով էլին պատասխան տալիս:

—Տեսար, Գրիշկա, ոնց են կառավարիչները քեզ պահպանում, —կանչեց մէկը բեռնակիրների միջից, որոնք արդէն ճաշը վերջացրած, գետնին վէր ընկած հանգստանում էին:

—Ես հո զրջմոլիկ եմ—դէ Սեմենըն էլ հոգս է քաշում, որ ճամբէս չկորցնեմ, չմոլորուիմ, —պատասխանեց Զելկաշը:

Դարպասին հասան: Երկու զինուոր տնտղեցին Զելկաշին ու թեթևակի բոթելով նրան փողոց ձգեցին:

—Զթողնէք ներս գալ, —կանչեց Սեմենըն, որ նաւահանգստի բակումն էր մնացել:

Զելկաշը փողոցը կտրեց անցաւ և նստեց օղետան դրան առաջ սաքուի վրայ: Նաւահանգստի դարպասից շառաչելով դուրս էր գալիս բեռնած կառքերի անվերջ շարքը: Նրանց ընդառաջ վազէ վազ գալիս էին դատարկ կառքեր, որոնց մէջ նստած կառավանները վերցեր էին թռչկոտում: Նաւահանգստիսը ոռնացող որսո, կծու փոշի էր արձակում ու գետինը դղրդում:

Զելկաշը, որ սովոր էր այս կատաղի խառնիճաղանձին, Սեմենընի դէպիքից գրգռուած, խիստ ուրախ էր: Նրա առաջն էր մի խիստ շահաւէտ գործ, որ քիչ աշխատանք ու մեծ ճարպիկութիւն էր սլահանջում: Նա վստահ էր, որ այդքան ճարպիկութիւն կունենալ և, աչքերը կկոցած, երեակալում էր, թէ ինչպէս վաղը քէֆ էր անելու երբ ամեն բան արած, վերջացրած ու իւր գրպանումն էլ թղթադրամներ կլինեն... Յետոյ մէտքն ընկաւ ընկերը Միշկան, որ շատ հարկաւոր պիտի գար այս գիշեր, թէ որ սաքը կոտրած չլինէր: Զելկաշը իր մտքում հայուանք թափեց մտածելով, թէ գուցէ առանց Միշկային չկարողանալ էլ բանը գլուխ բերել: Տեսնես գիշերս ինչպէս է լինելու...: Նա նոյեց երկնքին ու փողոցի երկարութեամբ:

Նրանից մի վեց քայլ անդին, մայթի մօտ, քա-

րուածքի վրայ, մէջքը սաքուին դէմ արած նստել էր մի երիտասարդ՝ կապոյտ զոլաւոր շապիկ ու նոյնպիսի վարտիկ հագած, ոտքին տրեխ, գլխին ծակ շեկ գրէ խարկ: Նրա կողքին դրած էր փոքրիկ տոպրակն ու անկոթ գերանդին, որ փաթաթած էր խոտէ լախտով ու խնամքով էլ խնամքով կապած: Երիտասարդը լայնաթիկունք էր, պնդակազմ, շիկամազ, արևակէզ ու հողմահար դէմքով և խոշոր կապոյտ աչքերով, որոնք բարեհոգի ու վստահ կերպով նայում էին Զելկաշին:

Զելկաշը ատամները բաց արաւ, լեզուն հանեց և, երեսին զարհութելի արտայալութիւն տալով՝ աչքերը չուած նրան յառեց:

Երիտասարդը, սկզբում տարակուսած, աչքերը թարթեց, բայց յետոյ յանկարծ քրքչաց ու ծիծաղելիս ասաց—այ դու խենթուլիկ և համարեա թէ առանց գետնից բարձրանալու, փոշու մէջ տոպրակը քաշ տալով ու գերանդու կրունկը քարերին խփելով, անշնորք կերպով վեր կացաւ տեղից ու Զելկաշի կողքին նստեց:

—Նը, ախպեր, երևում է լաւ ես քէֆ արել...— ասաց նա Զելկաշի վարտիկիկը քաշելով:

—Նա, տղայ, եգաէս մի բան եղել է,—պարզապէս խոսովանուեցաւ Զելկաշը: Նրան հէնց մի անգամից դիւր եկաւ այս մանկական պալծառ աչքերով, առողջ, բարեհոգի երիտասարդը: —Նձից ես գալիս:

—Նա, հնձից...: Անունը կայ, բայց ամանումը ո՛ր ասես զատ չկայ: Բաներս շատ փիս են: Հնձուորներին վերը, վճար չկայ: Առվածները սաղ թափուել են դուրս... աշխատանքը գին չունի, սկի ձեռ առնելու բան չէ: Կուբանում երեք արասի են տալիս...: Է՛լ դիտի ժամանակ... Առաջներն, ասում են, երեք, չորս, հինգ մանէթ են տալիս եղել...

—Առաջները... Առաջները. ինչ կասես դու, մենակ ուռւս մտքու երես տեսնելու համար մի երեքնոց

Էլն տալիս: Մի տասը տարի առաջ ես ինքս հէնց դրանով էլ ապրուստ եմ ճարել: Հէնց որ մի ստանիցա չէի մտնի ու լայտնի, թէ ոռւս եմ, ամեն կողմից կդադին, մտիկ կտային, կգարմանալին ու—երեքնոցդ ստացիր: Համ էլ մի լաւ կուտացնէին, կխմացնէին: Կաց քանի սիրտդ կուզի, ապրի քեզ համար:

Երիտասարդը սկզբում, Զելկաշի պատմածները լը-սելով, բերանը բաց վարանման ապշութիւնը կլոր դէմ: Քին, ականջ էր դնում, բայց լետոյ զլիսի ընկնելով, որ այս չլչլոտը սուտ է ասում, շրթունքները ցմփացրեց ու ծիծաղեցաւ: Զելկաշը, ժպիտը թաքցրած, պահել էր իւր լըշութիւնը:

— Հէնց դիտենաս ուղիղ բան լինի ասածդ, ես էլ ականջ եմ դնում ու հաւատում...: Զէ, Աստուած վը-կալ, որ առաջներն էնտեղ...

— Բաս ես ինչ եմ ասում որ...: Ախր ես էլ հէնց էն եմ ասում, թէ էնտեղ...

— Դէ դնա՛ք բանդ..., — ձեռքը թափ տուաւ երիտա-սարդը: — Կօշկակար հո չես: Կամ դերձէկ ես... ինչ բանի ես դու:

— Ե՞ս, — հարցրեց Զելկաշն ու, միտք անելով, ա-սաց: — Զկնորս եմ...

— Զկնորս: Համ. Ո՞նց է, ձուկ ընկնում է...

— Ինչո՞ւ ձուկ: Էստեղի ձկնորսները հո մենակ ձուկ չեն բռնում: Աւելի խեղդուած մարդիկ, հին խարխսի-ներ, չըի տակովն եղած նաւեր—ամեն բան: Դրա հա-մար ջոկ կարթեր կան...

— Դուս տու, դուս տու...: Զլնի էն ձկնորսներից լինիս, որ իրանք իրանց համար երգում են.

Յամաք ափին թոռ ենք զցում,

Նատ անգամ էլ ամբարներում

Թէ ռաստ էկաւ և տներում:

— Դու դրանց տեսէլ ես, — հեղնութեամբ հարց-

ըեց Զելկաշը նրան նայելով ու մտածելով, որ այս պա-տուական երիտասարդը շատ լիմարն է:

— Զէ, որտեղ պիտի տեսած լինիմ, լսել եմ...

— Հաւանո՞ւմ ես:

— Դրանց: Ինչո՞ւ չէ...: Ոչինչ, կան էլի, իրենց համար ազատ-արձակ մարդիկ են...:

— Ի՞նչ է, ո՞նց է ազատութիւնը...: Սիրում ես:

— Ո՞նց թէ սիրում եմ: Ինքդ քու գլխի տէրն ես, ուր ուզում ես—գնա, ինչ ուզում ես—արա...: Եդ ինչ խօսք: Թէ որ մի քիչ կարգին ապրուստ ունենաս ու վզիդ էլ բեռը չլինի, — դրանից էլ լաւ բան: Քէֆ արա-քանի սիրտդ կուզի, մենակ Աստուածդ մտահան մի անիր...:

Զելկաշը արհամարհանքով թքեց և երիտասարդից երեսը շուռ տալով կտրեց իւր հարցմունքները:

— Հէնց ինձ վեր առնենք... — յանկարծ ոգեսորուեցաւ երիտասարդը: — Հէրս որ մեռաւ, շատ քիչ կա-րողութիւն մնաց, մէրս պառաւ էր, հողը ուժը կորց-րած, ինչ անէի: Հո պէտք էր ապրել: Բայց ո՞նց: Զը-գիտես: Միտք ես անում, արի, մի հարուստ տեղ տըն-փեսայ գնամ: Նատ լաւ: Գոնէ աղջկայ փալը ջնկ հա-նէին...: Զէ—աներգ, դև է հո, ինչի՞ կ'ջոկի որ: Դէ գնա ու էնքան ժամանակ... տարիներ... նրա համար տանջուի: Տեսնո՞ւմ ես ինչ բան է: Համար որ մի հա-րիւր լիսուն ոսուրի դատած լինէի, իսկոյն սկինդ կը-կանգնէի ու ցոյց կտայի էդ անտիպին: Ուզո՞ւմ ես Մար-Փայի բաժինը ջոկ հանել: Զէ, պէտքս չէ: Փառք Աս-տուծու, գիւղում հո մենակ Մարփան չէ: աղջիկ շատ: Էն վախտը դէ բոլորովին ազատ, իմ գլխիս տէրը կըլի-նէի...: Է՛, — երիտասարդը հոգոց հանեց: Խոկ հիմի-ճար չկալ, պէտք է տնիեսայ գնալ: Ես էնոլէս էի կարծում, թէ էս է, Կուբայն կզնամ, մի երկու հարիւր կաշխատեմ — պըծաւ. աղա ես որ կաս...: Են ինչ... հէ-

զատ դուրս չեկաւ: Ե՛հ, ուզես-չուզես տնփեսայ կդառնաս: Ծառալ...: Քանի որ ես իմ ունեցածովս սկի չպիտի կարողանամ եօլայ գնալ... ամենենին: Ե՛հ—հէ—հէ...:

Տղան ամենենին չէր ուզում տնփեսայ լինել: Մինչև անդամ նրա դէմքը աղօտացաւ ու տիսրեց: Նա ծանր ծանր շարժուեց գետնի վրայ ու դրանով Զելկաշին սթափեցրեց մտախոհութիւնից, որի մէջ թաղուել էր նրա խօսքերի վրայ:

Զելկաշն զգում էր, որ էլ չի ուզում խօսել, բայց չգիտես ինչու դարձեալ հարցրեց.

—Հիմքի ուր ես գնում:

—Ուր պիտի գնամ: Յայտնի բան է տուն:

—Ախալէր ջան, ես ինչ գիտենամ... բալքի թուրքի երկիրն ես գնալու...:

—Թուրքի եր կի-րը...՝, —երկարացրեց երիտասարդը: —Եդ ո՞ր քրիստոնեան է գժուել, որ թուրքի երկիրը գնայ: Բան ասաց...:

—Նատ ախմախն ես էլել, —հոգոց հանեց Զելկաշըն ու նորից երեսը դարձեց նրանից, այս անդամ արդէն զգալով, որ հէջ մէկ բառ չի ուզում ասել նրան: Այս առողջ գեղացի երիտասարդը նրա մէջ մի բան էր զարթեցնում...:

Անմեկին, ծանր հասունացող, որտամաշ մի զգաց-մունք ներսդին, մի խորունկ տեղ շարժում էր և նրան արգելք լինում ուշքը կեդրոնացնելու և մտածելու այն ամենի վրայ, ինչ որ պէտք էր այս գիշեր անել:

Անպատիւ եղած երիտասարդը ցած ձայնով մի բան էր քրթմնջում՝ երբեմն-երբեմն զրջմոլիկի վրայ քուեցան, զրթունքները բաց եղան ու նեղցած աչքերը սկսան խիստ շուտ-շուտ ու ձիճաղելի բաց ու խուփ լինել: Պարզ երեաց, որ նա չէր սպասում, թէ այս մե-

ծարեխ չլոտի հետ իւր խօսակցութիւնն այսպէս շուտ-ու անսլատիւ կերպով կվերջանալ:

Զլոտն ալլ ևս նրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Նա մտախոհ շվշվացնում էր ու նստած տեղը մերկ ցեխոտ կրունկովը բախում տալիս:

Տղի սիրտն ուզում էր իւր ստացած վիրաւորանքի տեղը հանել:

—Եյ, ձուկ բռնող: Դու շնուր-շուտ ես հարըում, —սկսեց նա, բայց նոյն բոպէին ձկնորսն արագութեամբ նրա կողմը դարձաւ ու հարցրեց.

—Լսիր, տղայ: Կուզես էս գիշեր հետս գործ անել. հը՞: Նուտ ասա:

—Ի՞նչ գործ, —կասկածանքով հարցրեց երիտասարդը:

—Դէ, ինչ... ինչ որ տամ...: Ձուկ բռնելու կը-գնանք, թի կըաշես...:

—Լաւ...: Ինչո՞ւ չէ, կգամ: Աշխատել կարելի է: Միայն թէ... վախեմ փորձանքի մէջ ընկնենք: Աչքիս խիստ ծուռն ես երեւում...: մութ մարդ ես...:

Զելկաշը իւր կրծքի ներսը էրեցքի պէս մի բան զգաց ու սառն չարութեամբ ցած ձայնով ասաց.

—Որ խելքդ զատ չի կտրում, լաւ է սուս անես: Թէ չէ էնպէս գողը իդ կհասցնեմ, որ ուզեղդ ցըիւ գայ...:

Նա նստած տեղիցը վեր թռաւ, ձախ ձեռքով քաշեց ընչացքը, իսկ աջ ձեռքը սեղմեց, երկաթէ շլուտ բռունցք կազմեց, ու աչքերը փայլատակեցին:

Տղան վախեցաւ: Նա շտապով չորս կողմը նայեցաւ և, վեհերկոտութեամբ աչքերը թարթելով, նոյն պէս վեր թռաւ գետնից: Նրանք սուս ու փուս աչքով երար էին չափում:

—Հը, —դաժան կերպով հարցրեց Զելկաշը: Նա եռ էր գալիս ու ցնցւում այն անպատւութիւնից, որ

իրեն հասցըել էր այս հորդուկը, որին նա խօսակցութեան միջոցին բոլոր ժամանակը արհամարհում էր, իսկ այժմս յանկարծ սկսաւ սաստիկ ատել այն բանի համար, որ նա ալսպէս առողջ էր և անարատ կապոյտ աչքեր, արևառ երես, կարճ, պինդ ձեռքեր ունէր, որ մի տեղ, թէպէտ չգիտէր որտեղ, ունէր իւր գիւղը, գիւղում ունէր տնակ, որ հարուստ գիւղացին նրան տնիւսայ էր ուզում առնել, նա ատում էր այդ երիտասարդին նրա ամբողջ անցեալ ու ալագայ կեանքի պատճառով, բայց ատում էր աւելի այն պատճառով, որ նա, իրեն Զելկաշի հետ համեմատած այս երեխան, համարձակում էր սիրել ազատութիւն, որի ոչ արժէքը գիտէր և ոչ էլ նրան պէտքն էր դա: Միշտ անհաճոյ է տեսնել, որ այն մարդը, որին քեզանից վատ ու ստոր ես համարում, սիրում կամ ատում է նոյն բանը, ինչ որ դու, և այդպէսով քեզի նման է դառնում:

Երիտասարդը նայում էր Զելկաշի վրայ ու զգում, որ նա իրա աղան է:

—Ես հո...—ասաց նա,—չէ չեմ ասում...: Ուրախ էլ եմ: Ես էլ գործ եմ փնտրում: Ինձ համար մէկ բան է, քեզ մօտ եմ աշխատել, թէ ուրիշի: Իմ ասածս միայն էն էր, թէ դու հէք բանուը մարդու կերպարանք չունիս... խիստ իք... չլչլոտ ես: Դէ, ես հո հասկանում եմ, որ էդ բանը... տմեն մարդու գըլխի էլ կարող է դալ: Տէր Աստուած, ինչ է, հարբած մարդ տեսած չեմ, ինչ է: Է՛, ինչքան կուզես... հլաքեզանից էլ փոքը:

—Դէ, լաւ, լաւ: Ուրեմն խօսք ես տալիս,—արդէն աւելի կակլած հարցը Զելկաշը:

—Ես...: Հապա...ուրախութեամբ: Գինն ասա: —Գինը—աշխատանքի գորա է: Տեսնեմ ինչ աշխատանք կունենամ: Ալսինքն թէ, ինչքան ձուկ կը ունենք...: կարելի է մի հնդանոց ստանաս: Հասկացա՞ր:

Բայց այստեղ արդէն բանը փողի վրայ էր, և գեղացին ուզում էր, որ այդ բանի մէջ ինքը ճշտապահ գինի և միւնոյն ճշտապահութիւնը պահանջում էր նաև իրան գործ տուղից: Նրա մէջ նորից կասկած ու անվստահութիւն ծագեցաւ:

—Էդ ինձ, ախպեր ջան, ձեռք չի տայ: Դու ինձ մի հաստատ բան ասա...:

Զելկաշը իւր գերի մէջ մտաւ.

—Ինչ ես վռազում, համբերի: Արի տրախտիր գնանք:

Եւ նրանք սկսան կողքի գնալ փողոցով, Զելկաշը՝ աղայի կերպարանք առած, բեխերը ոլորելով, տղան՝ կտտարեալ հնազանդութեան արտայալտութեամբ, բայց գարձեալ վախվելով ու տարակուսանքով լի:

—Անհնդ ինչ է—հարցը Զելկաշը:

—Դաւրիլա, —պատասխանեց երիտասարդը:

Երբ որ նրանք մտան կեղտուտ ու մխոտած պանդոկը, Զելկաշը մօտ գնաց գախլին, սովորական մուշտարու եղանակով պատուիրեց մի շիշ օղի, շչի, մսէ խորովու, թէլ և, այս ամենը մէկ էլ կրկնելուց յետոյ, կարճ կտրեց. «բոլորը պարտքի»: Որին գախլդարը լուս գըլխով արաւ: Այս բանի վրայ Դաւրիլան մի անգամից խիստ մեծ յարդանք զգաց գէպի իւր աղան, որը, չընալով շալվերի կերպարանքին, մի այսպիսի անուն ու վարկ ունէր:

—Դէ, հիմի մենք կճաշենք ու ոնց որ պէտքն է կիսուենք: Դու մի քիչ սպասի, ես մի տեղ ունիմ, ձեռաց գնամ ու դամ:

Նա գնաց: Դաւրիլան չորս կողմը նայեցաւ: Պանդոկը ներքնատան մէջ էր. ներսը խոնաւ էր, մուգի, ու արազի, ծխախոտի մուխի, ձիւթի և մի ուրիշ սուրբանի յեղձուցիչ հոտով լցուած: Նրա հանդէպ, ուրիշ

սեղանի առաջ նստած էր շէկ մօրուքով, ածխի փոշու
ու ձիւթի մէջ կորած մի հարբած մարդ, որ նաւաս-
տի շոր ունէր հագին: Նա, շուտ-շուտ ծկլթալով մի-
երդ էր գրգռում, որը, մերթ շաշելով և մերթ կոկոր-
դային, ամբողջապէս հատ ընդ հատ ու կտրտած խօս-
քերից էր բաղկացած: Պարզ էր, որ դա ուսւ չէր:

Նրա ետևը նստած էին երկու գջլտած, սեամաղ,
արևակէզ մոլդավան կանալք և նոյնպէս հարբած
ձայնով մի բան ճրճռում:

Ապա մթնում երեացին դարձեալ ուրիշ կերպա-
րանքներ, ամենքն էլ տարօրինակ գզգուած, ամենքն
էլ կէս հարբած, կանչվուան, անխաղաղ....:

Գաւրիլայի սիրտը ճաքում էր մենակ: Ուզում էր,
որ աղէն շուտով գայ: Իսկ պանդոկի մէջ ազմուկը միա-
խառնում էր և թւում, թէ այդ մի ահագին կենդանի
է բառաչում: Այդ կենդանին հարիւրաւոր տարեեր
ձայներ ունէր, զայրագնած, կոյլ զկուրայն կտրտում
էր որ այս քարէ փոսից դուրս պրծնի, բայց ելք չէր
դժնում ազատուելու....: Գաւրիլան գգում էր, թէ ինչ-
պէս մի հարբեցնող ու ծանր բանով յագեցնում է իւր
մարմինը, որից գլուխն էր պտոյտ գալիս ու մթնում
աչքերը, որոնք հետաքրքրութեամբ ու վախով խոլոր-
մոլոր էին անում պանդոկի մէջ....:

Չելկաշն եկաւ և նրանք զըուց անելով սկսան ու-
տել, խմել: Երբորդ բաժակի վրայ Գաւրիլան քէֆով-
ցաւ: Նա զուարթացաւ և ուզում էր մի համելի բան
աղին, որը՝ երևելի մարդ—առանց մի բան նկա-
տելու, այսպէս համով ճաշ էր ուտեցրել նրան: Բայց
բառերը, որ տլիքի նման կուտակուել էին նրա կոկոր-
դից, չգիտես ինչու չէին պոկ գալիս լեզուի ծալ-
քից, որ յանկարծ ծանրացել, չէր շարժում:

Չելկաշը նայում էր նրան ու, հեղնօրէն ժպտա-
լով, ասում:

— Բանդ պլրծաւ.... Ե է՛ս, խոխալ... հինգ բաժա-
կով... բաս ոնց ես աշխատելու:

— Ախպէր, — թոթովում էր Գաւրիլան: — Մի վա-
խի: Ամօթով չեմ մնալ... ալսինքն այ...: Արի մի քեզ
պաչեմ... հը....:

— Լաւ, լաւ....: Ա՛ռ, մէկ էլ կոնծի:

Գաւրիլան խմում էր ու վերջապէս այն տեղը հա-
սաւ, որ ամեն բան սկսաւ նրա աչքի առաջ հաւասարա-
պէս, ալիքանման շորորալ: Սա դիւրական չէր և դրա-
նից նրա սիրտն էր խառնում: Նրա դէմքը ապնէշ-ոգե-
ւորուած արտայատութիւն ստացաւ: Ուզում էր բան
ասել, բայց ծիծաղելի կերպով միայն շրթունքներն էր
ծփացնում ու բառաչում: Չելկաշը, աչքը նրան յա-
ռած, նայում էր, կարծես մի բան էր մտաբերում, ո-
լորում էր բեխներն ու շարունակ, այժմ արդէն մոայլ
ու չար կերպարանքով, ժպտում:

Իսկ պանդոկը մոնչում էր հարբած աղմուկ բար-
ձրացրած: Շէկ նաւաստին, սեղանին լինած, քնել էր:

— Դէ վեր, գնտնք, — ասաց Չելկաշը վեր կենալով:

Գաւրիլան ուզում էր տեղիցը վեր կենայ, բայց
չկարողացաւ և, ալինդ ուշունց տալով, հարբած մար-
դու անմիտ ծիծաղով ծիծաղեցաւ:

— Բանդ փմբուկ է, — ասաց Չելկաշը նորից նրա
դէմը, աթոռի վրայ նստելով:

Գաւրիլան, բութ աչքերը աղին ձգած, շարունակ
ծիծաղում էր: Իսկ աղէն աչքերը սեեռած, ուշադիր
ու մտախոհ նայում էր նրան: Նա իւր առաջ տեսնում
էր մի մարդ, որի կեանքը իւր, գայլի ճիրանն էր ըն-
կել: Նա, Չելկաշն զգում էր, որ իւր ձեռքն էր այժմս
ալդ կեանքը և որ կողմ ուզենար կարող էր ծռել: Նա
կարող էր փշել այդ կեանքը, բայց կարող էր նաև
գիւղական կանոնաւոր շրջանակի մէջ դնել: Չելկաշն ի-
րեն տէր զգալով ուրիշի վրայ, զուարճանում էր և միտք

անում, թէ երբէք այս երիտասարդը խմելու չէ այն բաժակը, որ ճակատագիրը խմացը էր իրեն, Զելկաշն...: Եւ նա նախանձում ու ցաւում էր այս նորաբողոջ կեանքի վրայ, ծիծաղում էր վրան և մինչև անդամ վշտանում մտածելով, թէ դա դարձեալ կարող է իրա նման մի ուրիշի ճանկն էլ ընկնել...: Եւ վերջի վերջով այս բոլոր զգացմունքները միախառնուեցան Զելկաշի մէջ ու մի տեսակ հայրական և տիրական զգացմունք գարձանի Երիտասարդը նրա ավասոն էր դալիս, բայց և իրանց պէտքն էր նա: Այն ժամանակ Զելկաշը մտաւ Գաւրիլավի թեւը և, քամակից ծունկովը թեւթեակի հրհրելով, պանդոկի բակը հանեց, փայտի ստուերում պառկեցրեց, իսկ ինքը նստաւ շեղի մօտն ու սկսաւ չիրուխ քաշել: Գաւրիլան փոքր ինչ շուռ ու մուռ եկաւ, մըթմըթաց ու քննեց:

II

— Հը՝ պատրմաստ է, — ցած ձայնով հարցրեց Զելկաշը Գաւրիլավին, որ թիերի հետ էր:
— Ես ըսպէս: Թին լաւ չի ամրանում, կողքի ցը ցերը շարժում են: Կարելի՞ է թիով խփեմ, ամրացնեմ:

— Զէ-չէ: Զէն չդուրս դար: Զեռքով պինդ հուպ տուր, տեղը կընկնի:

Նրանք երկուսով սուս ու փռս կարգի էին ձգում իրենց մակոյկը, որ կապած էր մի նաւի քամակին: Այդտեղ մի ահագին նաւատորմիլ էր. կախին բազմաթիւ պռագաստանաւեր, որոնք կաղնի փայտ էին բարձած, և թրքական մեծ նաւեր, որոնք կիսով չափ դատարկած, բայց կիսով չափ էլ դեռ արմաւենի, սանդալ և նոճու հաստ կոճղեր էին բարձած:

Մութ գէշեր էր, երկնքի երեսին շարժում էին

վլրչոտ տմալակոյտերի հաստ շերտերը. Ծովը հանդարս էր, ու ու ձէթի պէս թանձը: Նա աղի խոնաւ բոլոր էր արձակում և նաւերի կողերին, ափերին խփուելով քննոյց մըմնջում ու թեթեակի շարժում նաւակը: Աքնոյց շատ հեռու, ծովի միջից բարձրանում էին նաւերի ու կմախքը՝ երկնքի մէջ ցցած բիզ բիզ կայմերով, որոնց գագաթին գոյն գոյն լապտերներ էին կախած: Ծովին անդրագարձնում էր լապտերների լոլսը. անժիւ գեղին բժեր սփռուած էին նրա վրայ: Դրանք շատ սիրուն գողգողում էին նրա համաչափ, և հզօրէն ուռու չափուակ, կաթնասուն, թաւշեալ կրծքի վրայ: Ծովը քնած էր օրուայ աշխատանքից խոնջացած մշակի առողջ խոր քննով:

— Դնանք, — ասաց Գաւրիլան թիերը ծովն իջեցնելով:

— Պատրաստ է: — Զելկաշը զեկի մի զօրեղ հարուածով մակոյկը ձգեց նաւերի միջև եղած ջրի շերտի վլրայ: մակոյկը արագութեամբ անցաւ ստհուն ջրի վրալով և ջուրը թիերի բաղկալնից կապտաւուն, Փոսֆորային լուսով փայլեց: Այդ փայլը, երկար ժապաւէնի նման, մեղմ լուսով, ոլորւում էր զեկի ետևից:

— Հը, ոնց է գլուխդ. ցաւում է, — քնքութեամբ հարցրեց Զելկաշը:

— Ել մի տասա... տրաքւում է...: Ես ըսպէս միքիչ ջուր անեմ, թըշեմ:

— Ինչի՞: Լաւն էն, վեր առ, ներսդ թըղիր, բարքի աւելի շուտ անցնի, — և նա վէշը Գաւրիլավին երկարացրեց:

— Հա: Տէր ողորմեա...
Թոյլ կլմկլթոց լսուեց:

— Ի՞նչ է, ուրախացար հո... հերիք է, — կանգնացրեց նրան Զելկաշը:

Մակոյին, անձախն ու մարպիկութեամբ նաւերի

միջև պտոյտներ անելով, նորից ոլացաւ... : Յանկարծ նո կուրս պրծաւ դրանց բազմութեան միջք, և նրանց առաջ բացուեց անսահման հզօր, փալլուն ծովը, որ գնում, կորչում էր կապուտակ տարածութեան մէջ, որ տեղից դէպի երկինք էին առձրանում լեռնացած տմպերը՝ դեղին բմբուկէ երիզը շուրթերին մանիշակակապոյտ ամպեր, ոլլ և կանաչաւուն, ծովի ջրի գոյնի, և այն տաղտկալի արճճագոյն ամպերը, որոնք մարդուս միտքն ու հոգին ճնշող թախծալի, ծանը ստուերներ են տրակում: Նրանք գանդաղդանդաղ իրար վրայ էին բարձրանում և, մերժ միանալով, մերժ միմեանց առաջկտրուկ անելով, իրար էին խաւնում իրենց գոյներըն ու ձեռերը, և իրենք իրենց կուլ գնում ու նորից կազմում նորանոր, վեհ և մոալլ ձեռերով... : Եւ մի օրհասական բան կար այն անշունչ կոլտերի գանդաղշարժման մէջ: Թուում էր, թէ այնտեղ, ծովի ծալրին անշափ չատ է դրանց տեղը և թէ նրանք պէտք է միշտ այդպէս անտարբեր կերպով բարձրանան երկինք՝ բութ չար նախատակ ունենալով թոլլ չուալու որ քնչած ծովի վրայ երեշք երկինքը չփալլի իւր միլիօնաւոր ոսկե աչքերով՝ գոյնզգոյն առտղերով, որոնց կենդանի և անըշալին ցոլքը վեհ ցանկութիւններ են գրգռում մարդկանց մէջ, որոնց սուրբ և մաքուր փալլը շատ թանի և մարդկանց համար:

— Լաւ չի ծովը, — հարցրեց Զելկաշը:

— Վատ չի: Մենակ՝ վախ բան է, — պատասխանեց

Դաւթիլան թիերով համաչափ և ուժով շուրը բաղիսելով: Զուրը հազիւ լսելի կերպով հնչում էր ու երկայն թիերի հարուածից ճխփում, ճխփում էր ու ամբողջապէս փալլում այդ Փոսֆորալին կապոյտ ջերմ լուսով:

— Վախ է: Այ ախմախ... , — ծաղլելով ասաց Զել-

կաշը:

Նա, այդ գողն ու ցինիկը, սիրում էր ծովը նրա

եռուն, նեարդալին բնաւորութիւնը, ծարաւի տպաւորութեանց, երեք չագուրդ չէր ստանում գիտելով այս անսահման, ազատ և հզօր մութ տարածութիւնը: Եւ նրա համար վիրաւորանք էր մի ալդպիսի պատասխան լսել իւր հարցին այն բանի մտսին, որ ինքը սիրում էր: Աեկի մօտ նստած, նա իւր թիով ճեղքում էր ջուրը, և այս թաւշեալ հարթութեան վրայ երկար ու հեռու գնալու փափագով լի' խաղաղ նախում էր առաջը:

Ծովի վրայ լինեցիս նրա մէջ ծնւում էր մի լախ, ջերմ զգացմունք, որ գլխովին համակելով նրա հոգին, նրան փոքր ինչ մաքրում էր կեանքի տպականութիւնից: Նա գնահատում էր այդ և սիրում էր իրեն՝ մաքրուած տեսնել այստեղ, ջրի և օդի միջև, ուր կեանքն խոհերն ու ինքը կեանքը միշտ կորցնում են՝ առաջինը՝ սուր բնաւորութիւնը, երկրորդը՝ արթէքը: Գիշերները ծովի երեսին մեղմ սահում է նրա քնչած շնչառութեան քնքուց շշուկը. այդ անընթելի հունչը խողաղութիւն է զեղում մարդուս հոգու մէջ և, շղզմար զսպելով նրա չար ձգտումները, զօրեղ ցնորքներ է ծնում նրա մէջ... :

— Բաս սարքն ուր է: Հէ, — լանկարծ հարցրեց Գաւրիլան չորս կողմը նալելով:

Զելկաշը ցնցուեց:

— Սարքը: Նաւակի լսելումն է:

— Եղ ինչ սարք է, — նորից կասկածանքով հարցրեց Գաւրիլան:

— Ի՞նչ ոլիտի լինի... :

Բայց Զելկաշն ամաչում էր իւր իսկական միտքը թաքցնելով այս երեխի առաջ սուտ ասի, և նրա տփսոսն էին գալիս իւր խոհերն ու զգացմունքները, որ այս տղան իւր հարցմունքով ոչնչացրել էր: Նա բարկացաւ նրան ծանօթ էրեցքը, որ զգում էր կրծքում ու կոկորդում, գրգռեց նրան և նա ազդու և չորչոր ասաց.

— Գիտե՞ս ինչ կայ, դու նստում ես նստի տեղի:
Քեզ չկերպերող բանի մէջ մի խառնուիք Քեզ բոնել ես
թի քաշես—դէ, թի էլ քաշի: Թէ ուր չանա ես թա-
կելու—փիս կլինի: Հասկացար....:

Մի ըովէ մակոյիը ցնցուեց ու կանգ առաւը թիե-
րը ջուրը վրբացնելով մնացին ջրի մէջ, և Գաւրիլան
անհանգստացած սկսաւ նստած տեղը տրոր-տրոր դալ:

— Շարժիր:

Թունդ հալհոյանքը օդը շարժեց: Գաւրիլան թիե-
րը շարժեց: Մակոյին ասես թէ վախեցաւ և, ջուրն աղ-
մկանից ճեղքելով, արագ, նեարդախին ցնցումներով տ-
ռաջ գնաց:

— Մէկ չափի....:

Չելկաշը, առանց թին ձեռքից բաց թողնելու և
իւր սառն աչքերը Գաւրիլախի սպրդնած, դողդողացող
շրթունքներով դէմքին մեխած, վեր կացաւ, կանգնեց
տեղից: Մէջքը ծռած, դէսկի առաջ խոնարհած, նմանել
էր կատուի, որ պատրաստ է թռիչք անելու:

Լսելի էր ատամների չարացած կրծտոց ու մի ինչ
որ ոսկորների թոլլ չըխկոց:

— Ո՞վ է կանչում, — լսուեցաւ ծովից մի դաժան
ձայն:

— Դէ, շարժի մի քիչ, իժի ծնունդ... կամաց թիե-
րի ձայնը... կսպանեմ էս շանը...: Դէ, շարժի...: Մէկ,
երկու: Հապա: Մի ձայն հանի... և' կշարդեմ, — թըշ-
շում էր Չելկաշը:

— Աստուածածին... Մարիամ, — շշնչում էր Գաւրի-
լան վախից և ուժով աշխատելուց թուլացած ու դողդո-
ղալով:

Մակոյիը սահուն կերպով շուռ եկաւ ու սկսաւ
գնալ նաւահանգստի կողմը, ուր լապտերների լոյսերը
միաւորուած, բազմազոյն խումբ էին կազմել և երե-
ւում էին կալմերի սիւները:

— Հէյ: Էդ ով է գուռում, — լսուեց նորից:
Այժմ ձայնը աւելի հեռուից էր գալիս, քսն թէ
առաջին անգամ: Չելկաշը հանգստացաւ:

— Բարեկամ, դու ինքն ես գոռացողը, — ասաց նա
դէսի ձայների կողմը, ապա դարձաւ դէսի Գաւրիլան,
որ դեռ աղօթք էր վսփսում. — Դէ, ախալեր, քու բաղդդ
էր: Թէ որ էդ դեւերն ետևներից ընկնէին — պրծել
էիր: Հասկանում ես: Ես քեզ իսկոյն... ձկների կուշտը....:

Այժմ, երբ որ Չելկաշն արդէն հանգիստ ու մինչեւ
անգամ բարեհոգի եղանակով էր խօսւմ, Գաւրիլան,
որ վախիցը դեռ դողդողում էր, աղաչեց.

— Եկ դու ինձ բաց թող: Աստուծու սիրուն լինի,
բաց թող: Որտեղ ուզում է լինի, ինձ ափ հանի: Վայ-
վայ-վայ....: Հոգով-մարմնով կորայ....: Դէ, արի դու
Աստուածդ միտդ բեր, ինձ բաց թող: Ես ինչ եմ ա-
րել քեզ: Ես բանը չեմ կարսող....: Կեանքումս էսպիսի
բաների մէջ չեմ եղել....: Առաջին անգամն է....: Տէր
Աստուած: Հոգիս պիտի կորցնեմ: Այս ոնց ինձ խարե-
ցիր, ախալեր. հը: Մեղք է հոգուդ....: Զէ հոգիդ կոր-
ցնում ես....: Այ քեզ բան....:

— Ի նչ բան, — խստութեամբ հարցըց Չելկաշը: —
Հը: Դէ, ասա, ինչ բան:

Երիտասարդի վախը նրան զուարճացնում էր, և
նա հրճւում էր թէ Գաւրիլախի վախովը և թէ այս
բանովս թէ — տես, ինչ հուժկու մարդ է Չելկաշը:

— Մուժթ բաներ են, ախալեր....: Աստծու խաթ-
րին, ինձ բաց թող....: Եւ ինչ եմ արել քեզ... հը....:
Հոգի-ջան...

— Ներիք է, լոի: Որ հարկաւոր չլինէիր, չէի ել
վերցնի: Հասկացար. — դէ, լոի:

— Այ Աստուած, — լաց լինելով հաւաչեց Գաւրիլան:

— Դէ, դէ... գլխիս լաց լինող ալէտք չէ, — ընդ-
հատեց նրան Չելկաշը:

Բայց Գաւրիլան այժմ արդէն չեր կարողանում էրեն զսպել և, կամաց հեկեկալով, լաց էր լինում, քիթը սրբում, նստարանի վրայ նստած տեղը շարժում, բայց և ուժով, լուսահատաբար թիավարում։ Մակոյկը սլաքի նման թռչում էր։ Ճանապարհին դարձեալ գիմացները ելան նաւերի կոյտեր, և մակոյկը, նաւերի արանքում ջրի նեղ շերտերի վրայ տանտիւլիկի պէս պտոյտ-պտոյտ անելով, նորից կորաւ նրանց միջև։

— Եւ, ոռւ, լսիր։ Որ քեզ բան հարցնող լինի — տես, թէ որ ուզում ես սաղ մնալ, սկի բան չտսես։ Հասկացար։

— Ե՛է՛Հ... — լուսահատ հառաչեց Գաւրիլան ի պատախան խիստ պատուէրին և գառնութեամբ աւելացրեց. — իմ բանս պլծած է...»

— Մի ոռնա, — խստութեամբ շշնչաց Զելկաշը։

Գաւրիլան այդ շշունչի վրայ բոլորովին կորցրեց որկից բան մտածելու ընդունակութիւնը և, վտանգի սառն նախազգացումով բռնուած, մեռածի նման էր։ Նա մեքենաբար թիերն իջեցնում էր ջրի մէջ, լեռ կուանում, հանում էր ջրից, նորից իջեցնում և սաղ ժամանակը իւր տրեխներին նայում։

Սլիքների քնամած մըմունջը մուալլ զօղանջում էր, և մարդու վրայ սարսափ ձգում։ Ահաւասիկ նաւահանգիստը...։ Նրա գրանիտեալ պատի միւս կողմը լսում էին մարդկանց ձալներ, ջրի ճղփիւնը, երգ, բարակ սուլոց. .

— Կաց, — շշնչաց Զելկաշը. — Բաց թող թիերը։ Զեռներդ պատին դէմ տուրի կամաց, անպիտան...։

Գաւրիլան ձեռները սահուն քարերին դէմ տալով մակոյկը պատի երկարութեամբ առաջ տարաւ։ Մակոյկը քարի վրայ բուսած լորձին քսուելով անձայն առաջ էր գնում։

— Կանգնի...։ Թիերն ինձ տուր. Էստեղ տուր Գլխագիրդ որտեղ է. պարկումդ է։ Պարկդ ինձ տուր. դէհ, շուտ արա, տուր։ Ես, ախալէր ջան, նրա համար եմ առնում, որ չփախչես...։ Ել հիմի չես փախչի։ Առանց թիերի գուցէ ճար անէիր, փախչէիր, բայց առանց գլխագրի կլախես։ Սպասիր էստեղ։ Բայց որ ձէն ես հանել, է; տես-ծովի տակ կդտնես ինքդ քեզ...։

Եւ յանկարծ ձեռներով մի բանից բռնած Զելկաշըն օդի մէջ բարձրացաւ և պատի վրայ անհետացաւ։

Գաւրիլան ցնցուեցաւ...։ Այս բանս խիստ արագ եղաւ։ Նա զգում էր, թէ ինչպէս վրայից կամաց-կամաց վերանում է այն անիծուած ծանրութիւնն ու վախը, որ զգում էր այդ թմւաբեխ լզար գողի ներկայութեանը...։ Պէտք էր փախչել...։ Եւ նա, ազատ շունչ քաշելով, չորս կողմը նայեցաւ։ Չախ կողմը բարձրացած էր կալմերից զուրկ մի նաւի սև կմախք, մի ահագին դադաղ՝ մարդագուրկ ու դատարկ...։ Նաւի կողերին հասցրած ալիքների ամեն մի բաղխումը խուլ, հնչական արձագանք. էր առաջացնում, որ ծանր հառաշի էր նմանում։ Աջ կողմում ջրի վրայով սառն ու ծանր օձի նման ձգուած էր ալիսակալի քարէ խոնաւ պատը։ Ետեսումն էլ երեսում էին ինչ որ սև նաւակը-մախքներ, իսկ առաջը, պատի ու այդ դադաղի միջև, երեսում էր լուս, անսպատացած ծովը, որի վրայ սև ամպեր էին կախ ընկել։ Եւ գրանք, ահագին ու ծանր, գանդաղելով շարժում էին և խստարից արձակում իրանց սորսափը, պատրաստ իրենց ծանրութեամբ ջընջ. խելու մարդուաւ։ Ամեն ինչ սառն էր, սև, չարագուշակ։ Սարսափը պատեց Գաւրիլային։ Այս սարսափն աւելի վատ էր, քան Զելկաշի ազդածը. դա պինդ գըրկեց Գաւրիլայի կուրծքը, վեհերկոտ մի կոշտ դարձեց ու մեխեց մակոյկի նստարանին...։

Իսկ շուրջն ամեն ինչ լուս էր։ Բացի ծովի հա-

ոաջից ոչ մի ձայն. և թւում էր, թէ հէնց այն է որ
այդ լոռեթիւնը պիտի պայթէր մի տեսակ զարհուրելի,
կատաղի—բարձրագոչ կերպով, մի այնպիսի ձեռվ, որ
ամբողջ ծովը մինչև յատակը պիտի դղրդացնէր և ծո-
վային անտառտի մէջ շաղ տար այս բոլոր սև նաւերը:
Ենչպէս առաջ, այժմ էլ ամպակուտերը դանդաղ ու
տաղտկալի սահում էին երկնքի երեսին, բայց ծովից
աւելի և աւելի բազմութեամբ էին բարձրանում դը-
րանք և, երկնքին նայելով, կարելի էր կարծել, թէ
դա էլ ծով է, բայց միւս քնած, խաղաղու հարթ ծովի
վրայ շուռ ընկած խոռվալոյզ ծով: Ամպերը նման էին
դէպի երկիրս դիմող ալիքների՝ որոնց ալեոր գանգուր
կատարները ցած էին ուղղած, վհերի՝ որոնցից քամին
պոկել, դուրս էր հանել այդ ալիքները, և նոր նոր
կազմուող ծուփերի, որոնք զեռ կատաղութեան և զայ-
րոյթի կանաչաւուն փրփուրով չեն ծածկուած:

Դաւրիլան իրեն բոլորովին ճնշուած էր զգում այս
մոալլ խաղաղութեամբ ու գեղով, նա զգում էր, որ
ուզում է իւր աղալին շուտով տեսնել: Հասլա եթէ ա-
զան ախտեղ մնալ...: Ժամանակը շատ ծանր էր անց-
նում, աւելի ծանր, քան երկնքի տապերն էին շարժ-
ում...: Եւ ժամանակ առ ժամանակ լոռեթիւնն աւե-
լի չարագուշակ էր գառնում...: Բայց ահա ալիսակալի
ետեւ լսուեց ճղիւն, խշոց ու շշուկի պէս մի բան:
Դաւրիլալին թւում էր, թէ ին է, պիտի մեռնի...:

— Հէր! Քնած ես: Բռնիր... զգոյշ..., — լսուեց Զել-
կաշի խուլ ձայնը:

Պատի վրայից մի ծանր ու խորանարդ բան էր
ցած գալիս: Դաւրիլան այդ բանը մակոյկի մէջ առաւ:
Այգականի մէկ հատ էլ իշաւ: Այնուհետեւ պատի լալն-
քով ձգուեց Զելկաշի երկար կերպարանքը, չգիտես որ-
տեղից դուրս եկան թիերը, Դաւրիլալի ոտքերի մօտ

ընկաւ նրա տոպլրակը, և Զելկաշը, ծանր-ծանր շունչ
առնելով նստաւ զեկի մօտ:

Դաւրիլան նրան նայելով ուրախ ու վեհերկոտ
ժպտում էր:

— Յոգնեցամբ, — հարցրեց նա:

— Առանց դրան կլինի, հորդուկ: Դէ, հապա
թիերին մի լաւ ոյժ տուր...: Լաւ օգուտ ունեցար,
ախալեր ջան: Բանի կէսն արել ենք: Այժմ պէտք է
գեերի աչքի տակովն անց կենալ, իսկ լետոյ փողդ
ստացիր ու գնա քու Մաշկալիդ կուշտը: Դու Մաշկա
ունիս: Հէ, տղայ:

— Զէ-է: — Դաւրիլան բոլոր ոյժը թափում էր և
աշխատում կրծքով, որպէս փուռքս, և ձեռներով — որ-
պէս ալողպատեալ զսպանակ: Զուրը մակոյկի տակ քըլ-
քըլում էր, և զեկի ետեւից ընկած կտպուտ շերան ալժմ
աւելի լայն էր: Դաւրիլան մի անգամից քրտնքակոլ էր
եղել, բայց գարձեալ շարունակում էր բոլոր ուժովը
թիավարել: Այս գիշեր երկու անգամ սաստիկ ահի մէջ
լինելով, վախենում էր թէ երրորդ անգամն էլ լինի,
և նա մի բան էր միայն ցանկանում — շուտ վերջացնել
այս անիծուած աշխատանքը, ցամաք գուրս գալ ու
վիախչել այս մարդուց, քանի զեռ նա իրեն իսկապէս
չէ սպանել կամ բանդ ընկնելու պատճառ չի եղել: Նա
վճռեց ոչ մի բանի վրայ չկասել հետը, ամենեին ըընդ-
դիմանալ, ինչ որ հրամալէ՝ ամեն բան անել, և, եթէ
յաջողուի սաղ-սալամաթ ազատուել, հէնց վազն ևեթ
նիկողուս Հրաշագործի համար պատարագ պնելտալ...:
Նրա կրծքից ուրգում էր դուրս պլծնի ջերմ ազօժ-
քը...: Բայց նա իրեն բռնում էր, շոգեմեքենալի նման
հեռում և, աչքի տակովը Զելկաշին նայելով, լուս մը-
նում:

Իսկ Զելկաշը չորչոր, երկար հասակով, զեպի ա-
ռաջ ծուռւած, թռչել-գնալու պատրաստ թռչունի նը-

ման, իւր բազէի սուր աչքերով նայում էր մակոյի առջեր խաւարի մէջ և, իւր գիշատիչ, սապատաւոր քիթը դէս ու դէն անելով, մի ձեռքով պինդ բռնած էր զեկի կոթը, իսկ միւսով քաշքշում էր բեխը, որը ցընցւում էր ժպիտներից, որոնք շարունակ ծռմուռմ էին նրա շրթունքները։ Զելկաշը գոհ էր իւր աջողութիւնից, գոհ էր իրենից և այս երիտասարդից, որը իրենից սաստիկ վախեցել իւր ստրուկն էր դարձել։ Նա այժմուանից արդէն բերկրանք էր զգում վաղեան մեծքէֆի համար, իսկ այժմ զուարճանում էր իւր ոլժով և որ կարողացել էր ստրկացնել արդ ջահէլ, թարմ երիտասարդին։ Նա դիտում էր, թէ ինչպէս սա աշխատում էր, և խեղճ տղան նրա ափսոսն եկաւ, ու կոմեցաւ նրան սիրտ տալ։

— Հէլ, — ցած ձայնով խօսեց նա քմծիծաղ տալով։
— Նատ վախեցար, հը։

— Ո...չինչ..., — հոգոց հանեց Գաւրիլան ու իր կորդը մաքրեց։

— Ել հմի թիերին շատ զօր մի տայ։ Պրծանք։ Մենակ մի տեղ մնաց, էն էլ որ անցանք...։ Հանգըստացի։

Գաւրիլան հլութեամբ հնազանդեցաւ, շաբկի թեւով երեսի քրտինքը սրբեց և թիերը նորից ջրի մէջ թողեց։

— Թէ, թիերը կամացուկ շարժի։ Տես ջուրը ձէն չհանի։ Պէտք է մի դարպասից էլ վախչենք։ Կամաց, կամաց...։ Թէ չէ, ախսպէր ջան, էստեղ մարդիկ շատ թունդ են։ Ճակտիդ էնպէս կտրաքացնեն, որ սկի ձենըդ չդուրս գայ։

Ալժմ արդէն մտկայկը ջրի վրայով գողեգող, բոլորովին անձայն էր առաջ գնում։ Միայն թիերից ծովի մէջ թափում էին կապտագոյն կաթիլներ և նրանց կտթած տեղում նոյնպէս կապտաւուն բժեր էին առա-

չանում։ Գիշերը քանի գնում աւելի ու աւելի լուռ և խաւար էր դառնում։ Ալժմ արդէն երկինքն ալեծուփ ծովի չէր նմանում — մութ-մութ ամպերը, անշարժ ու ներքեւ կախ ընկած փուուել էին երկնքի երեսին և համահաւասար, ծանը վարագոյրի նման ծածկել նրան։ Իսկ ծովն աւելի էր խաղաղել, սեացել ու աւելի զօրեղ կերպով էր բուրում ջերմ, աղի հոտը և այլ ևս առաջուայ նման այնքան լայն չէր թւում։

— Ախ, ինչ լաւ կլինէր, որ անձրև գար, — շշնջաց Զելկաշը։ — Էնպէս կանցնէինք, ոնց որ վայտի քամակում լինէինք։

Մակոյիից աջ ու ձախ սև ջրի միջից ցցուեցան ինչ որ նաւաշէնքեր՝ անշարժ, մռայլ ու նոյնպէս սև։ Գլրանցից մէկի վրայ շարժւում էր մի լոյս, մէկը լաստերը ձեռին ման էր գալիս։ Ծովը, նրանց կողերը շուելով, աղերսալի ու խուլ ձայն էր հանում, իսկ գրանք էլ գրգռալի ու սառը արձագանք տալով, կարծես վիճում էին հետը և չէին ուզում մի ինչ որ բան զիջել նրան։

— Պահապանները..., — հազիւ լսելի ձայնով ասաց Զելկաշը։

Այն ըոսէից, որ նա պատուիրել էր թիերը կամաց շարժել, սուր սպասողական գրութիւնը նորից պաշարել էր Գաւրիլային։ Նա ամբողջապէս առաջ, խաւարի մէջ էր մեկնուել, և նրան թւում էր, թէ իւր մարմինը մեծանում է, — ոսկրներն ու չղերը բութ ցաւ պատճառելով ձգւում, երկարում էին, գլուխը, միմիալն մի մտքով պաշարուած, ցաւում էր, մէջքի մորթը ցընցւում, իսկ սաքերին մանր, սուր և սառն ասեղներ էին ցցում։ Լարուած ուշագրութեամբ խաւարի մէջ նոյնելուց նրա աչքերը պէծագին էին տալիս, և նա բուպէ տու բուպէ սպասում էր, թէ հէնց էն է, մի բան դուրս կգայ և կգուռայ նրանց։ «կացէք, գողեր»։

Եւ ալժմ, երբ Զելկաշը շշնջաց սպահասպանները»՝ Գաւրիլան ցնցուեց՝—սուը, կիզող միտքն անցաւ նրա միջով, անցաւ ու բաղիսեց նրա պինդ լարուած զղերին՝ —նա ուղում էր գոռալ, օգնութեան կանչել...։ Նա արդէն բաց էր արել բերանը, տեղիցը մի քիչ վեր կացել, կուրծքը ուղցրել, օդ հաւաքել, բերանը բացել... բայց լանկավոր, սարսափահար եղած, հենց գիտենաս մարակահար եղած, աչքերը փակեց ու նստարանից ցած գլորուեցաւ։

... Մակոյիկի դիմացը, հեռաւոր հորիզոնի վրայ ծովի սև ջրի միջից գուրս եկաւ մի ահագին Հրա-կապոյտ սուը, գուրս եկաւ, ճեղքեց գիշերուայ խաւարը, իւր սուը բերանով սահեց, անցաւ երկնքի ամպերի վըրալից և լախ կապոյտ շերտ կազմած փոռւեցաւ ծովի երեսին։ Փոռւեցաւ, և նրա փալուն շերտի վրայ խաւարի միջից գուրս եկան մինչ այդ անտեսանելի մնացած սև, լուռ, գիշերային փառահեղ մառախուղով այտածն նաւեր։ Թուում էր, թէ զրանք երկար ժամանակ մնացել էին ծովի լատակում, ուր փոթորկի հզօր ուժն էր մզած, և ահա տիժմս, ծովի ծնունդ հրեղէն սուըի հրամանով, —գուրս եկան յատակից, որպէս զի դիտեն երկինքն ու այն ամենը, որ ջրի երեսին էր գտնուում...։ Նաւերի թոկերը բռնել էին կարմերի չորս բոլորքը՝ նման կպչուն ջրախոտերի, որոնք այս սև հսկաների հետ միասին ծովի յատակից գուրս գալով, իրենց ցանցով խճճել էին նրանց։ Եւ դա, այդ կապոյտ սուըը, ծովի երեսից նորից բարձրացաւ գէպի երկինք, փալլտակելով բարձրացաւ, նորից ճեղքեց գիշերը և նորից փըռուեցաւ արդէն մի ուրիշ ուղղութեամբ։ Եւ գարձեալ այնտեղ, որտեղ փոռւեցաւ, խաւարի միջից դուրս սողացին նաւերի կմաղքները, որ մինչ այդ անտեսանելի էին մնում։

Զելկաշի մակոյկը կանգ առաւ և, կարծես տատա-

մսած, օրօրւում էր ջրի երեսին Գաւրիլան, ձեռներով երեսը ծածկած, պառկած էր լատակին, իսկ Զելկաշը թիով բովում էր նրան և կատաղաբար, բայց ցած ձայնով տշշում։

— Յիմար, այդ մաքսատան շրջիկ նաւն է...։ Այս էլէքտրական լապտեր է...։ Վեր կաց, ախմախ։ Էս ըռպէխս մեր վրէն էլ լոյսը կքցեն...։ Աւանակ, ինձ էլ կկորցնես, ինքդ էլ կկորչես։ Դէ...։

Եւ վերջապէս, թիակի սուը ծայրի հարուածներից մէկը միւսներից աւելի ուժով իջաւ Գաւրիլակի մէջքին, նա վեր թուաւ, աչքերը բաց անելու սիրտ չունենալով, նստեց նստարանի վրայ և, խարխափելով թիերը գտաւ ու մակոյին առաջ շարժեց։

— Կամաց։ Զէ կսպանեմ։ Դէ, կամաց...։ Այ քեզ լիմար, գրողը տանի քեզ...։ Ի՞նչ էիր վախենում։ Հը։ ալլանդակ...։ Լապտեր ու հայելի է — ուրիշ ոչինչ։ Թիերդ կամաց...։ Թթուած մոռւթ...։ Հայելին դէսդէն էն շարժում ու ծովը լուսաւորացնում, որ աեսնեն — թէ ինձ և քեզ նմաններ չկան ծովի վրայ։ Մտիկ են տալիս, որ ապրանք չփախցնեն։ Մի վախի, տղայ, լոյսը մեզ չի հասնի։ Ալժմ մենք...։ Զելկաշը լաղթական կերպով չորս բոլորքը նայեցաւ։ Պրծաւ, գուրս եկանք...։ Թիւհ...։ Շատ բաղդաւոր ես էլել, այ ախմախ...։

Գաւրիլան լուռ էր, թիավարում էր ու, ծանր շունչ քաշելով, ծուռ-ծուռ նայում այն կողմը, ուր շարունակ բարձրանում ու իջնում էր սրբ հրեղէն սուըը։ Նա ամենեւին չէր կարողանում հաւատալ, որ դա լուսամփոփաւոր լապտեր է։ Կապտագոյն սառը լուսը, որ խաւարը կտրատելով ծովին արծաթի գոյն էր տալիս, մի անբացատրելի բան ունէր իւր մէջ, և Գաւրիլան գարձեալ սրտամաշ վախի մէջ ընկաւ։ Եւ դարձեալ նախազգացումը ճնշում էր նրա կուրծքը։ Նա

թիավարում էր մեքենաբար և շարունակ կուչ գալիս, ասես թէ վերևից հարուածի էր սպասում, և ոչինչ, ոչ մի ցանկութիւն չկար այլ ևս նրա մէջ—նա դատարկ էր և հոգուց զուրկ: Այս գիշերուայ յուզումներն ամեն մարդկալին ինչ կըծել, վերջացրել էին նրա միջեց:

Իսկ Զելկաշը նորից յաղթանակում էր—կատարեալ աջողութիւն...: Նրա զօրեղ ցնցումների սովոր նետրդերն արդէն հանգստացել էին: Նեշտանքով գողդոջում էին նրա բեխերը և աչքերի մէջ ագահութեան կրակներ բորբոքւում: Նա շատ լաւ էր զգում իրեն, ատամների արանքից շվշվացնում, ծովալին խոնաւ օդը խորը ներս քաշում, չորս կողմը նալում ու, երբ աչքերը կանգ էին առնում Գաւրիլիալի վրայ, բարեսրտութեամբ ժպտում:

Քամի բարձրացաւ և զարթեցրեց ծովը, որի վրայ յանկարծ մանր մանր կոհակներ խողացին: Ամպերն ասես թէ աւելի բարակել ու թափանցիկ էին դարձել, բայց բոլոր երկինքը պատած էր ամսիերով: Զնալելով որ քամին, թէպէտ դեռ թեթև, ազատ թռչում էր ծովի վրայ, բայց էլի ամսիերը մնացել էին անշարժ և կարծես մի սոսկական, տաղտուկ բան էին միտք անում:

—Դէ, ախալեր ջան, ժամանակ է, ուշքի արի: Հենց գիտենաս հոգիդ ջանիցդ հուալ տուել, դուրս են հանել, մենակ մէկ տոպրակ են թողել ոսկըներ լցրած: Սիրելի բարեկամ...: Ել ամեն բան ալրժանք: Հէլ...:

Բայց և այնպէս Գաւրիլիալին հաճելի էր մարդու ձալն լսել, թէկուզ ալդ՝ Զելկաշի ձալնը լինէր:

—Լսում եմ,—կամացուկ ասաց նա:

—Բաս լաւ: Վախկոտ...: Արի գու դեկը բռնի, իսկ ես թի քաշեմ: բեզարեցիր հալբաժի:

Գաւրիլան մեքենաբար տեղը փոխեց: Երբ որ Զել-

կաշը, տեղերը փոխելիս, նրա երեսին նայելով նկատեց, որ խեղճ տղան գողդոջուն ստների վրայ կանգնած տեղը տատանւում է, սկսաւ աւելի ևս խղճալ նրան: Նա նրա ուսութութեց:

—Հը՛, հը՛, մի վախի: Դէ լաւ էլ փող աշխատեցիր ախր: Ես քեզ, ախալեր ջան, շատ կտամ: Մի քըսան հնգանոց կուզե՞ս, հա:

—Ինձ... ոչինչ պէտքը չէ: Միայն թէ ափ դուրս գայի...

Զելկաշը թափ տուաւ ձեռքը, թքեց ու սկսաւ թիավարել՝ թէկուզ իւր երկայն ձեռներով շատ լետ ձըգելով:

Ծովը զարթնեց: Նա խալտում էր մանր ալիքներով—ծնունդ էր տալիս նրանց, փրփառի երիգով գարգարում, միմեանց բաղխում ու մանրիկ փոշի դարձնում: Փրփուրը հալչելով ֆշշում էր ու հառաջում,—և շուրջ ամեն ինչ լի էր ներգաշնակ շշուկով ու ճըղփիւնով: Խաւարն ասես թէ աւելի տոսկացած լինէր:

—Դէ, գու ինձ ասա...,—խօսեց Զելկաշը, —Հիմի կգնաս տուն, կպստկուես, կսկսես գետինը վարել, ցորեն յանել, կինդ երեխերք կրերի, ուտելիքի պակասութիւն կունենաս. դէ, սազ կեանքդ ջանդ պիտի դուրս գայ...: Հը՛, ինչ կեանք է սա: Ի՞նչ համ կալ դրա մէջ:

—Ի՞նչ համ ալիտի լինի, —վեհերկոտութեամբ ու ցնցուելով պատասխանեց Գաւրիլան, —էլ ինչ խօսեմ...

Տեղ տեղ քամին պատառում էր ամսիերը և պատառուածքից նալում էին երկնքի կապոյտ կտորները՝ մի-երկու աստղով զարդարուն: Աստղերն անդրադառնալով ծովի մէջ, թռչկոտում էին ալիքների վրայ ու մէկ անհետանում, մէկ՝ նորից փալլում:

—Դէպի աջ բռնի, —ասաց Զելկաշը: —Էս է, շուտով կհասնենք: Հայդա...: Պրծանք: Լաւ շոհեցանք

Տեսար ինչ բան է...: Մէկ գիշերուայ մէջ—կէս հազար չահնչեցի. հը՞. ո՞նց է:

—կէս հազար,—կասկածանքով երկարացրեց Գաւրիլան, բայց իսկոյն էլ վախեցաւ ու ոտքով հակերին խփելով շտապով հարցրեց.—էս ինչ բան է որ:

—էս—պըրուշում է: Թանկնոց բան: Սալը որ իր գնով ծախելու լինես, հազարը կանց կենալ: Եհ, ասենք ես էժան եմ գին գնում...: Լաւ չէր...:

—Հմ... համ, —հարցական կերպով երկարացրեց Գաւրիլան:—Երնէկ մի էսքան բան էլ իմ ձեռս ընկնէր,—հաւաչեց նա միտքը բերելով գիւղը, իւր ամբողջ աղքատիկ տնտեսութիւնը, նրա կարիքները, իւր մօրը և բոլոր այն հեռաւոր, սրտին մօտիկ բաները, որոնց խաթրու ինքը աշխատանքի էր դուրս եկել, որոնց խաթրու ալսքան տանջուել էր գիշերա: Նրան պաշարեցին լիշողութիւնները իրենց գիւղի մասին, որը ոլորկ սարի վրայով ձգուած էր գէսկի թխտենու, սպիտակ ուռենու, վագենու, վալրի կեռասենու անտառի մէջ ծածկուած գետակը...: Այս լիշողութիւնները ջերմացրին նրան և մի քիչ սիրտ տուին:—Եհ, ինչ բան կլինէր...» - թախծալի լոգոց հանեց նա:

—Ի՞նչ խօսք... կարծում եմ իսկոյն երկաթուղի կը նստէիր ու թուի տուն...: Ու ո՞նց աղջկերքը սլիտի սիրէին քեզ, իւմ, ո՞նց...: Ո՞րը կուզես ջոկի: Տուն կշնէիր... էհ, ասենք, տուն շինելու համար փողը մի քիչ պակաս կդար...

—Դրուստ ես ասում... տուն շինելու համար պակաս կդար: Մեղանում փէտը թանկ է:

—Ե, ինչ արած: Հինը կթաղացնէիր: Ո՞նց է, ձի ունիս:

—Զի՞: Ունենալով ունիմ, բայց շատ է ծեր... անպիտանը:

—Դէ, ուրեմն ձի կառնէիր: Մի լա՛-աւ ձի. կով...

ոչխարներ...: Ամեն տեսակ հաւեղէն... հը:

—Ել մի ասի...: Որ էգպիսի մի բան լինէր: ՕՓ, Աստուած ջան. ինչ կեանք կունենալի...:

—Հմ-հա... ախակեր ջան, ոչինչ, եօլա կդնալիր...: Ես էլ եմ ալդ բանում մի քիչ զատ հասկանում: Ես էլ եմ մի վախտ ինձ համար բուն ունեցել...: Հէրս գեղի մէջ առաջի հարուստներից էր...:

Զելկաշը գանդազ թիտավարսւմ էր: Մակոյկը տատանւում էր ալիքների վրայ, որոնք խփում էին նրա կողերին, և հազիւ հազ մուշտ ծովի վրայ առաջ գնում, մինչ ծովը քանի գնում աւելի ու աւելի է կալտում: Երկու հոգի, ջրի երեսին օրօրուելով ցնորքների մէջ էին թողուել և մտախոհութեամբ չորս բոլորքը նայում: Զելկաշը դիտմածը էր գիւղի մասին խօսքը բաց արել, որ Գաւրիլային մի քիչ սիրտ տայ ու հանգըտացնի: Ակզբում նա խօսում էր ու քթի տակ ծիծագում, բայց յետոյ խօսակցին կշտամբելով ու լիշեցնելով գիւղական կեանքի քաղցրութիւնները, որոնցից ինքը վաղուց է լուսախաբ եղած մոռացել էր ալդ ամենը և միայն ալժմս միտքը բերել—նա կամաց կամաց խորացաւ, և փոխանակ որ երիտասարդին հարց ու փորձ անէր նրանց գիւղի և նրա գործերի մասին, ինքն էլ չնկատելով ալդ, սկսաւ ինքը պատմել.

—Գիւղացու կեանքի մէջ, ախակեր ջան, առջի բանը ազատութիւնն է: Ինքդ քու զլիսի տէրն ես: Քու տունդ ունիս—թէկուզ մի զատ էլ չարժի—էլի քոնն է: Քո հողդ ունիս—թէկուզ մէկ ափ տեղ լինի—էլի քոնն է: Քու հաւդ է, քու ձուն, քու խնձորը: Դու քու հողի թագաւորն ես...: Մէկ էլ կարդ կայ, կանոն կայ... Սուաւոր որ վեր կացար—գործ կայ... գարնանը մի տեսակ գործ, ամառը ուրիշ, աշնանը, ձմեռը—էլի ուրիշ: Ուր էլ որ կնաս, վերջը քու տունդ կդառնաս Տաք...: Հանգիստ...: Հօ թագաւոր ես: Էնպէս չի, —

սգեսը զերջացրեց Զելկաշը գիւղական յարմարութիւնների ու իրաւունքների երկար շարքը, և չգիտեանցու մոռացաւ պարտաւորութիւնները լիշել:

Գաւրիլան հետաքրքրութեամբ նայում էր նրան. ու նոյնպէս սգեսը ու մոռացել էր, թէ ում հետ էր իւր գործը և իւր առաջ տեսնում էր միան իրեն այս մի գեղացի, որը շատ սերունդների քրտինքով կալած էր հողին, մանկան լիշողութիւններով կապուած էր նրա հետ, բայց ինքնակամ կերպով անջատուած էր և դրա համար էլ իւր արժանի պատիմը կրած:

— Եղ ուղիղ ես ասում, հոգի ջան. Ախ, շատ ուղիղ: Թէ, հիմի քեզ մտիկ արա, ինչ ես դու առանց հողի. Հը...: Հողը, ախպեր ջան, ոնց որ հարազատ մօրդ, իր օրում չես մոռնայ:

Զելկաշը մտքի մէջ ընկաւ...: Նա զգաց իւր կըրծքի կիզիչ զբգիռը, որը դուրս էր գալիս հէնց որ մէկը նրա ինքնասիրութեանը — անհաշիւ խիզախութեան ինքնասիրութեանը — կպչում էր, մանաւանդ երբ տիգ մէկը իւր աչքում արժէք չունէր:

— Դուս ես տալիս. . . — տաց նա կատաղաբար. — Հինք կարծում ես, թէ էս ամենը ես դրուստ եմ ասում...: Ոնց չէ, տես, պինդ բռնի...:

— Զարմանք մարդ ես, ճշմարիտ..., — դարձեալ կոտրուեցաւ Գաւրիլան: — Խօսքս հօք վրայ չի: Թեզ պէս շատ: Ե՞հ, ինչքան անբաղդ մարդիկ կան աշխարքիս վրայ...: Անտուն-անտէր ման եկող...:

— Իշի ձագ, եկ թիերը վեր առ, կարճ կտրեց Զելկաշը զսպելո! Հայհոյանքների ամբողջ հեղեղը, որ հաւաքուտծ էր կոկորդում: Նրանք նորից փոխեցին տեղերը, որի միջոցին Զելկաշը հակերի վեալից զեկի կողմնանցնելիս ուուր ցանկութիւն զգաց Գաւրիլալին այնպէս մի հասցնել, որ ջուրը գլորուի, բայց միենոյն ժամա-

նակ այնքան ոյժ չունեցաւ, որ նրա երեսին մտիկ տար:

Կարճ խօսակցութիւնը լռեց, բայց այժմս մինչեւ անգամ Գաւրիլայի լուսութիւնից գեղացու հոտ էր փը-չում...: Զելկաշը լիշեց անցեալը, մոռանալով զեկավարել մակոյիքը, որը ալեկոծութիւնից խոտորուած դէպի ծովն էր գնում: Կարծես թէ ալիքները հասկանում էին, որ այս մակոյիք կորցրել է իւր նպատակը, և, աւելի ու աւելի վեր վեր ձգելով, հեշտութեամբ խաղ էին անում հետը, թիակների բաղմումից քնքուշ կապուտ գոյնով հրհրատաւմ: Իսկ Զելկաշի առջեկից արագ-արագ անցնում էին անցեալի, հեռաւոր անցեալի պատ'երները, որոնք ներկայից բաժանուած էին տասնմէկ տարուայ շրջմոլիկ, սինլքոր կեանքի պատուէրով: Նա լիշեց իւր մանկութիւնը, իրենց գիւղը, իւր մօրը, որ կարմրաթուշ, մոխրագոյն բարի աշքերով մի փափլիկ կին էր, հօրը — ժանտ դէմքով շիկամօրուս մի հսկայ: Յիշեց իւր փեսայութիւնը, կնոջը, սեւչեայ, երկարահիւս չաղլիկ, փափլիկ, զուարթ Անփիսալին...: տեսաւ իրեն նորից սիրուն, գուարդիայի զինուոր եղած, նորից տեսաւ հօրը ալեսոր և աշխատանքից կզացած, նոյնպէս և մօրը — կնճռոտած, գեանին կպած, դիտեց նաև այն տեսարանը, թէ ինչպէս գեղացիք ընդառաջ էին եկել, երբ նա ծառայութիւնից տուն էր դառնում. տեսաւ նաև թէ ինչպէս հալը հապատանում էր ամբաղջ գեղի առաջ իւր Գրիգորիով, թաւաքեխ, առողջ զինուոր, ճորպիկ ու գեղեցիկ Գրիգորի որդով...: Յիշողութիւնը, դժբաղների այս պատուհասը, մինչեւ անգամ անցեալի քարերն է կենդանացնում և նոյն իսկ անցեալում խմած թոյնի մէջ մեղք է կաթեցնում... և այս բոլորը նրա համար, որպէս զի ոչնչացնէ մարդուս՝ զգալ տալով իւր սխալները և, նրան տիգ անցեալը սիրել ստիպէլով, պագայի լոյսից կտրէ:

Զելկաշն զգաց հալրենի օդի հանգուցիչ, փաղա-

քուշ հովը, որ իւր հետ բերում էր և մալրական սիրազեղ խօսքերը, և իսկական գեղացի հօր խըստները, շատ մոռացուած հնչիւններ, և հենց նոր սառուցից հալած, հենց նոր վարած և հենց նոր աշնացանի զմբուխտի պէս կանաչ մետաքսով պատած մայր հողի ախորժ հոտը...: Եւ նա երբ զգաց շուարած, ընկած, խղճուկ ու մենակ, արմատահան եղած ու առ միշտ դեն ձգած ալն կեանքի ընթացքից, որի մէջ մշակուած, պատրաստուած էր իւր երակների մէջ հոսող արիւնը:

— Հէ! Էս ուր ենք գնում, — հարցը յանկարծ Գաւրիլան:

Զերիաշը ցնցուեցաւ և գիշատչի անհանգիստ հայեացքով չորս կողմը նայեցաւ:

— Պրուստ, գրողը տանի, Էս ուր ենք եկել...: Վնաս չունի...: Հապա մի քիչ զօռ տու...: Էս ըոսկէիս կհասնենք:

— Մտքով էիր անցել, — ժպտալով հարցը Գաւրիլան:

Զելկաշը ուշադրութեամբ Գաւրիլալին նայեցաւ: Երիտասարդը բոլորովին ուշքի էր եկել. նա հանգիստ էր, զուարժ և մինչև անգամ կարծես թէ լազմանակում: Նա շատ ջահէլ էր և նրա սաղ կեանքը իւր ձեռքն էր: Եւ ոչինչ էլ չէր հասկանում: Այդ լաւ չէր: Գուցէ հողը պահպանէ նրան...: Երբ որ ալս բաները Զելկաշի մտքովն անցան, նա աւելի ևս տիրեց և Գաւրիլալի հարցին մռայլած տաց.

— Իադէլ եմ...: Համ էլ մակովկը օրօրւում է...

— Եղ ուղիղ է...: Ասել է, որ մենք այլ ևս էս բաներով չենք բռնուի, — և նա ոտքով հակերին խփեց:

— Զէ... Հանգիստ կաց: Էս ըոսկէիս կանձնես ու փողը կստանամ...: Հմ—հա...

— Հինգ հարթւու:

— Պակաս չե...

— Փող եմ ասում է...: Որ իմս լինէր...: Ե՞հ, ինչ օրիկ պիտի բացուէր...:

— Գեղ կտանէիր:

— Ի՞նչ խօսք: Իսկոյն...

Եւ Գաւրիլան անձնատուր եղաւ ցնորքների: Զելկաշն ասես թէ տեղում մեխուած լինէր: Բեխերը կախէին ընկած, աջ կողքը, ալիքների ցալտերից թրջուել էր, աչքերը փոս էին ընկել ու փալլը կորցըրէլ: Նա շատ խղճալի էր և ծանրացել: Նրա կերպարանքի մէջ բոլոր գիշատիչ կողմերը ծածկուել էին՝ ստորացած մտախոհութիւնից, որը նոյն իսկ նրա կեղտոտ շապկի ծալքերից էր կաթում:

— Ես էլ եմ կարգին գադրել...: Սադ ջարդուել եմ:

— Էս ըոսկէիս կը հասնենք...: Ա՛յ որտեղ է...:

Զելկաշը յանկարծ պտոյտ տուեց մակովկը և ուղղեց գէպի մի սե բան, որ ջրի միջից դուրս էր ցցուած: Երկինքը նորից ամպերով ծածկուեցաւ և սկսաւ տալ մանր տաք անձրեւ, որ ալիքների կատարներին ընկնելով ուրախ ձայներ էր հանում:

— Կաց: Կամաց, — կարգադրեց Զելկաշը:

Մակովկի քիթը նաւի կողին գիպաւ:

— Քննիծ են, ինչ է, Էս ախմախները..., — քրթմըն ջում էր Զելկաշը կեռիկը ձգելով ինչ որ թոկերի, որոնք նաւի վրայից ցած էին իջել: — Աստիճանները չեն իջեցըրէլ...: Անձրեն էլ եկաւ... կարծես չէր կարող մի քիչ առաջ գալ: Հէլ, սպունգներ...: Հէլ, հէլ...:

— Սելկաշ, դու ես, — լսուեց վերևից մի փաղքուշ մըմուց:

— Դէ, աստիճանները իջեցըրէք:

— Կալիմերա, Սելկաշ:

— Դու աստիճաններն իջեցըրու, մուխի կախած սատանայ, — զոռաց Զելկաշը:

— 0, էսօր նեղացած ես եկել...: Ելաւ:

— Բարձրացիր, Գաւրիլա, — ասաց Զելկաշը իւր ընկերոջը:

Մի ակնթարթում արդէն նրանք նաւի վրայ էին, ուր երեք մօրուսաւոր սև պատկերներ, իրար հետ մի տարօրինակ, ականջ ծակող լեզուով տաք տաք խօսելով նավի ափից Զելկաշի մակոյիկ մէջն էին դիտում: Զորորդը, երկար վերարկուի մէջ փաթաթուած, մօտեցաւ նրան և անխօս ձեռքը սեղմեց, ապա կասկածանքով Գաւրիլային նայեցաւ:

— Առաւոտու փողը պատրաստ լինի, — կարճ ասաց Զելկաշը: — Իսկ այժմ գնամ քնեմ: Գաւրիլա, գնանք: Քաղցած հօ չես:

— Լաւ է քնենք..., — պատասխանեց Գաւրիլան, և հինգ րոպէից արդէն խորթում էր նաւի կեղտոտ ամբարում, իսկ Զելկաշը, կողքին նստած, իւր ոտքի վրայ փորձում էր մէկի կօշիկը և, մտախոհութեամբ կողքի թքելով, առամների արանքով չարացած ու տիսուր շըվշըվացնում: Յետոյ նա պառկեցաւ Գաւրիլայի կողքին և, առանց ոտի մէկ կօշիկը հանելու, ձեռները գլխի տակը ծալեց, սկսաւ աչքերը յառած նաւի տախտակամածին նայել ու բեխերը շարժել:

Նաւը թեթեակի օրօրում էր ալէկոծուող ջրի վըրայ, մէկ տեղից լսուում էր փայտի խղճալի ճրճոցը, անձրեւ փափուկ-փափուկ թափուում էր տախտակամածի վրայ և ալիքները բաղխում էին նաւի կողերին...: Թախտալի էր այդ ամենը և հնչում որպէս մայրական օրօր, որ իր գաւակի անյոյս բաղդն է երգում...

Զելկաշը, ատամները կրճտացնելով, գլուխը բարձրացրեց ու չորս կողմը նայեցաւ... և, մի բան շնչալով, նորից պառկեցաւ...: Ոտները չուած՝ նա խոշոր մկրատի էր նմանել:

III

Առաջին գարթնողը Զելկաշն եղաւ. նա անհանգըստութեամբ չորս կողմը դիտեց, իսկոյն հանգստացաւ ու նայեցաւ Գաւրիլային, որ գեռ քնած էր: Սա անուշ խրխում էր և իւր մանկական, առողջ, արեակէզ ամբողջ դէմքովը մի բանի համար ծիծաղում: Զելկաշը լոգոց հանեց և թոկէ նեղ աստիճաններով վերև բարձրացաւ: Ամբարի մուտքից նայում էր արճճագոյն երկընքի կտորը: Լոյս էր, բայց աշնան նման տաղտուկ ու մթագնած:

Զելկաշը երկու ժամից յետ դարձաւ: Նրա գէմքը կարմըել էր, բեխերը կտրճի նման վերև ոլորած, շըրթունքներին խազում էր բարեհոգի — զուարթ ժպիտը: Նա հագել էր երկայն ճտքաւոր պինդ կօշիկ, բաժկոն, կաշուէ վարտիկ, և նման էր օրսորդի: Նրա բոլոր շորերը մաշուած, բայց ամուր էին և շատ էլ սազ էին գալիս նրան. Չորերը նրան լախացրել, նիշարութիւնը ծածկել էին և կերպարանքին քաջարի ձեւ տուել:

— Հէր, հորդուկ, վեր կաց..., — ոտքովը բոթեց նա Գաւրիլային:

Գաւրիլան վեր թռաւ տեղից և, քնաթաթախ, նրան չճանաչելով, պղտոր աչքերով վախեցած վրան նայեցաւ, Զելկաշը բարձը ծիծաղեցաւ:

— Ոու սրան տես..., — վերջապէս լայն ժպտաց Գաւրիլան: — Աղա է գարձել:

— Եղ մեզ մօտ ձեռաց լինում է ու: Է՛, ինչ վախ կոտն ես եղել. վայ-վայ: Երէկ գիշեր էդ ինչքան անգամ ուզում էիր թէ մեռնեօ. Հը. էդ ասաւ:

— Իէ մի ինքդ պատի. առջի անգամն էր, որ էսպիսի բանի մէջ էի գտնւում: Հօ կարելի էր հողովարմնով կորչել:

— Մէկ էլ որ լինէր կգնալիք, հը՞:
 — Մէկ էլ...: Ախր... ես... ոնց ասեմ...: Նայելով... ինչ շահ կալ... էդ է բանը:
 — Ասենք թէ երկու հարիւրանոց լինէր:
 — Երկու հարիւր: Վնաս չունի...: Որ ըտենց լինի կարելի է...:
 — Կաց: Հապա որ բռնուիս...:
 — Ով է իմանում... բալքի չեմ բռնուում, — Ժպտաց Գտւրիլան: — Զես բռնուի, բայց մարդ կդառնաս:
 Զելիշշը բարձր ձախով ուրախուրախ ծիծաղում էր:
 — Դէ, լաւ, հանաքը դէնը: Վեր կաց, ահ դուրս գնանք...: Պատրսստուի:
 — Ի՞նչ ունիմ պատրսստուելու: Ես պատրսստեմ...:
 Եւ ահա նրանք դարձեալ մակոլիի մէջ են: Զելիաշը զեկի մօտ, Գտւրիլան—թիերի: Նրանց վերև մոխրագոյն երկինքը ծածկուած է հաւասարապէս փըռուած ամպելով, իսկ մակոլիի հետ խաղ է անում պղտոր.կանաչ ծովի՝ աղմկալի կերպով ձգելով նրան ալիքների վրայ, որոնք դեռ ևս մանր են և իրենց պայծառ, աղի ցալտերը ուրախուրախ շաղ են տալիս մակոլիի մէջ: Մակոլիի քթի վրայից հեռուն երեսում է ուփի աւազուտ շերտը, իսկ զեկի քամակին հեռու ատրածում է ազատ, կայտուն ծովը, որի վրայ տեղ չի մնացել, որ ակօսուած չլինի վազվզող ալիքների երածներով, որոնք արդէն տեղ-տեղ զարդարուած են փըռ.փուրի շքեղ ու սպիտակ երիզով: Իսկ ալնտեղ, հեռուն, երեսում են ծովի կրծքին ծփացող բազմաթիւ նաւեր, իսկ ձախ կողմը հեռուն—կայմերի մի ամբողջ անտառ և քաղաքի տների սպիտակ կոյտեր: Այն կողմից ծովի վրայ զեղում է մի խուլ աղմուկ, որ որոտում է և, ալիքների ճղփիւնի հետ միախառնուած, մի գեղեցիկ:

զօրեղ երաժշտութիւն ներդաշնակում...: Եւ այս ամենի վրայ ձգուած է մոխրագոյն մշուշի մի բարակ քօղը որ առարկանները բաժանում է իրարից...:
 — Իւլֆ. իրիկնապահին փոթորիկ պիտի լինի որ...:
 — ասաց Զելիաշը գլխով ծովը ցոյց տալով:
 — Փոթորիք, — հարցըց Գտւրիլան թիերովը զօրեղ կերպով ալիքները կարելով: Նա արգէն ոտքից գլուխը թրջուել էր ցալտերից, որ քամին շաղ էր տալիս ամբողջ ծովի վրայ:
 — Համար, — հաստատեց Զելիաշը:
 Գտւրիլան փորձող հայեացք ձգեց նրա վրայ...:
 — Հը՛, ինչքան տուին, — հարցըց նա վերջապէս տեսնելով, որ Զելիաշը մտադիր չէ խօսք բանալու:
 — Ա՛յ, — ասաց Զելիաշը գրպանից մի բան հանելով և նրան մեկնելով:
 Գտւրիլան տեսաւ ծիտանագոյն թղթերն ու նրա առաջ ամեն բան պայծառ, ծիածանի գոյն առաւ:
 — Վահ...: Իսկ ես էնակէս էի կարծում, թէ սուտ ես ասում...: Էդ... որքան է:
 — Հինգհարիւր քառասուն: Լաւ է:
 — Լաւ...: — Չշնչաց Գտւրիլան ագահ աչքերը ձգելով հինգհարիւր քառասունին, որ Զելիաշը նորից գրպանն էր դնում: — Ե՛— Էհ...: Եդքան որ փող ունենալի...: — Եւ նա հոգեմաշ կերպով հառաչեց:
 — Տես թէ ինչ քէֆ ենք անելու մէկ տեղ, տղայ, — ոգեորուած բացականչեց Զելիաշը: — Իւլֆ, կը կոնձենք որ...: Մի վախի, ախաղեր ջան, ես քու վայդ կտամ...: Քառասուն կտամ. Համ: Հերիք է: Ուզում ես էս ըսպէս տամ:
 — Թէ որ... տալիս ես... քու քէֆը չի՞: Կվերցնեմ:
 Գտւրիլան ամբողջ մարմնով գողգողում էր ակընկալութիւնից, այլ և մի սուր բանից, որ կըծում էր նրա կուրծքը:

— Հա, հա, հա...: Խենդուլիկ: Կվերցնեմ: Աեր
առ. տխպեր ջան, խնդրեմ: Նատ եմ խնդրում, վեր առ:
ինքս էլ չգիտեմ, թէ ինչ եմ անելու էսքան փողը:
նա, վերցրու, մի քիչ թեթևացրու...:

Զելկաշը մի քանի կարմիր թղթադրամ երկարաց-
րեց Գաւրիլային: Սա դողդով ձեռքով վերցրեց փողը,
բաց թողեց թիերը և, աչքերը ագահութեամբ չուած ու-
ներս, կրծքի մէջ աղմկալի օդ քաշելով, հենց գիտենաս
մի այրող բան էր խմում, սկսաւ փողերը թեփ տակ
ներսը մի տեղ թաքցնել: Զելկաշը ծաղրական ժպտով
գիտում էր նրան: Իսկ Գաւրիլան նորից թիերը ձեռք
առած սկսաւ գրգռուած, շտապով թիավարել, կարծես
մի բանից վախում լինէր, և աչքերը ներքւ էր ձգել:
Նրա ուսերն ու ականջները ցնցւում էին:

— Օ՛ ագահ ես եղել...: Լաւ բան չի...: Բայց
զարմանալու բան չկայ..., գեղցի ես հո..., — մտախո-
հութեամբ ասաց Զելկաշը:

— Ախր ձեռիդ որ փող լինի, ինչե՞ր չես անի... —
բացականչեց Գաւրիլան յանկարծ սաստիկ յուզուած: Եւ
նա հատ ընդհատ, շտապով, կարծես իւր մտքերի ե-
տևից հասնելու ցանկութեամբ և բառերը թուցնելով
սկսաւ խօսել գիւղական կեանքի մտաին, երբ որ փող
ունիս և երբ որ փող չունիս: Պատիւ, լիութիւն, ա-
զատ կեանք, ուրախութիւն...:

Զելկաշը ուշադրութեամբ, լուրջ գէմքով և մի ինչ
որ մտքի վրայ աչքերը կլոցած լսում էր նրան: Ժա-
մանակ առ ժամանակ նա գոհ սրտով ժպտում էր:

— Հասանք, — վերջապէս Զելկաշն ընդհատեց Գաւ-
րիլայի խօսքը:

Ալիքը վեր առաւ մակոյկն ու յարմարաւոր կեր-
պով աւազի մէջ խրեց:

— Դէ, տխպեր ջան, հիմի վերջացաւ: Մենակ պէտք
է մակոյկը մի քիչ հեռու քաշել, որ ալիքը չտանի:

Յետով կգան կվերցնեն: Իսկ մենք մնաս բարով...: Էս-
տեղից մինչի քաղաք ութը վերստ է: Դու էլի քաղաք
ես գառնալու, հը:

Դեռ բարեհոգի-խորամանկ ժպտը փալում էր
Զելկաշի գէմքին և ինքն էլ ամբողջապէս մի այնպիսի
մտրդու կերպարանք ունէր, որը իրեն համար շատ
հաճելի, իսկ Գաւրիլայի համար մի բոլորովին անակըն-
կալ բան էր մտադրուած անելու: Զեռքը գըլանը դը-
րած նա շրիշրիկացնում էր թուղթ փողերը:

— Զէ... չեմ գնայ...: Ես... — Գաւրիլան խեղդւում
էր, չէր կարողանում խօսել: Նրա մէջ եռ էին գալիս
անթիւ ցանկութիւններ, խօսքեր, զգացմունքներ, ո-
րոնք ոչնչացնում էին իրար և նրան կրակի պէս այ-
րում:

Զելկաշը շուարած նայում էր նրան:

— Ես ինչի ես ծռմուռում, տանջւում, — հարցրեց
նա:

— Ենպէս..., — բայց Գաւրիլայի գէմքը մէկ կար-
մըրում էր, մէկ սպիտակում, և նա կանգնած տեղը
տրորարոր էր գալիս՝ ոչ գիտես ուզում էր Զելկաշի
վրայ յարձակուի, ոչ գիտես՝ ուրիշ ցանկութիւնից տանջ-
ւում է, մի այնպիսի ցանկութիւն, որ գծուար էր կա-
տարել:

Զելկաշը տեսնելով նրա արսպիսի գրգիռը, իրեն
վատ զգաց: Սպասում էր, թէ ինչով է վերջանալու:

Գաւրիլան սկսաւ ծիծաղել մի այնպիսի տարօրի-
նակ ծիծաղով, որը կարծես աւելի լացի նման էր: Նա
գլուխը խոնարհել էր, Զելկաշը նրա գէմքի արտալայ-
տութիւնը չէր տեսնում, անորոշ կերպով երեսում էին
միայն Գաւրիլայի ականջները, որոնք մէկ կարմըրում,
մէկ սպիտակում էին:

Դէչ, գրողը տանի քեզ, — թափ տուեց ձեռքը Զել-
կաշը: Հո ինձ չես սիրահարուել: Տրուում է — հէնց

Գիտենաս աղջկի լինի...: Բարքի ինձանից բաժանուել չես ուզում: Հեյ, խոխա: Դէ մի խօսի, է: Թու չէ, էս է, գնում եմ...:

